

1358

ԳՈՐԾ՝
ՔԵՆԵԿԵՆՆԵ



ՅԻՔԵՆԿՏԻԿ

ԵՎ
ԵՎԵՆԵՆԵՆԵ

1841



ԳՈՐԾ ԲԵՆԵԿԵՆ

Սպա հանունի Չորեք Բարոյաւան
առաքինութեց :

Ն Ա Խ Ե Ր Գ Ա Ն Ք :

Ուր և խնդրի՝ բան դործնական ,
անդ խնդրելի՝ գործ բանական •
Թէ այն գտաւ՝ կանխաժաման ,
գիւտն է սորին՝ պատրաստական :
Օ՛ն , զօղեսցո՛ւք ըզգործ ընդ բան ,
յեռեալ յոսկի՝ քար պատուական •
ակնարկելով՝ իբր՝ ի զմայլման ,
յառաքինեաց՝ հանդիսարան :
Զի՛ գումարեալ՝ կայք ՚ի հանդէս ,
հանդիսականք՝ կորովատես •
տեսարանիս՝ տեսիլ անտես ,
տեսաւորի՝ տեսողաց պէս :
Հայեւատիպ՝ յայտնէ զերեսս ,
զիս ցուցանէ՝ ինձ պարզապէս •
բարիդ բարիոք՝ աստ տեսանես ,
չարին ըզգէմս՝ ՚ի գէմս ամես :
Լուսով բանին՝ վա՛ռ այս ճրագ ,
զննէ զաշխարհ՝ ծագէ ՚ի ծագ •
Թիւր ընդ ուղիս՝ բերեալ ՚ի կագ ,
վանեալ հերքի՝ կապտի և թագ :

Աստ

Աստ մերկանայ՝ հին պատրուհակ,
ազատութե՛ն՝ անձնագոյակ .

ուր սէր անձին՝ պատիր դիմակ,
զիւր նշմարէ՛ թիւրեալ դիտակ :
Թո՛ղ հինք գայցեն՝ փիլիսոփայք,
հանգիսանալ՝ աստէն վկայք .

ոյք՝ ՚ի զննել՝ զձեզ, որ կայք,
և՛ զննեսցին՝ ինքնին հսկայք :

Զի որ ծանեան՝ զոր ինչ արժան,
զի՞ գործեցին, բայց անարժան .
ուսուցանել՝ միայն ուսան,
և ոչ առնել, որ է արձան :

Այլ մեր քրտանց՝ գրի վախճան,
առնելութե՛ն՝ լինել օճան .

եւք ընդ քառեակ՝ ընդ աշտիճան,
յառաքինեաց՝ ՚ի բուն խրախճան :





Գ Ո Ր Օ Վ

Խ Ո Յ Ե Մ Ո Ւ Թ Ե Ա Ն Ե

Օրինակ • ԷՅ :

Խոհեմութի աս Բարձրից աստիճանութի :

Մհա գահոյք՝ առդումնի ,
 աթոռ փառաց՝ եմ արքունի •
 բազմոց արժան՝ բազմականի ,
 զիւր աննման՝ ոչ ընդունի :
 Հաս իմաստնոյն՝ օր վախճանի ,
 ո՛հ , և աթոռ՝ իւր կործանի •
 որդի անմիտ՝ չէ՛ արժանի ,
 հօր իմաստնոյ՝ գաւազանի :
 Եւ թէ ծառայ՝ տիրէ երկրի ,
 աշխարհ լինի՝ աշխարեւի •
 ո՛ր ըրբովամ , յերբովամ ,
 մի քան զմի՝ պարսաւելի :
 Զի՛նչ դուք առ այս՝ պատասխանի ,
 խորհրդականք՝ առաքինի •
 ուր խոհական այր մեռանի ,
 ո՛ր յիմ նստցի՝ նստարանի :
 Եթէ լսէք՝ իմում բանի ,
 ինձ զատ յինէն՝ չի՛ք արժանի •
 ինքնին նստայց՝ յիմ ատենի ,
 խոհեմութիս՝ բանականի :

Զ

Բ

Հպար

Հպարտութե՛ն՝ միտք ոչ տանի,
 Ճշմարտութի՛նն՝ ակըն յայտնի •
 զի նամ միտք հաւանի,
 Խոհեմութե՛ն՝ դատաստանի :

Աւրարու-Ջիւն :

Արդա՛րե յոյժ՝ արդարացի,
 Ինձ բանաւոր՝ բանըդ լսի •
 Իւրաքանչիւր՝ իւրըն տացի,
 Ես յիմ մատեան՝ նախագրեցի :
 Հարցցո՛ւք Լեւթ՝ ՚ի հանդիտի,
 արիութե՛ն՝ մեր աջակցի •
 ո՛վ պահապան՝ գահիս դիցի,
 զի մի օտար՝ ոք դողացի :

Աւրու-Ջիւն :

Ո՛ր այլ երբեք՝ ուրեք խնդրի,
 քան զինքնակամ՝ վառեալս արի •
 Եթէ կենօք՝ եթէ մահու,
 բարւոյն պահեամ՝ արւոյն պահի :

Բարեխառնու-Ջիւն :

՚ի սոյն խորհուրդ՝ ողջախոհի,
 ամենայն լաւ՝ բարեխառնի •
 Թէ ՚ի խորհուրդ՝ մեր շխառնի,
 նենգ խորամանկ՝ մուշկանի :
 Նոյնօրինակ՝ տարագրելի,
 խորհուրդ տհաս՝ Թարմ հասակի •
 զի ըրբովամ, յերբբովամ,
 քակտեն զաթոռ՝ սողովոնի :

Խորամանկու-Ջիւն :

Գիտեմ, զի եմ՝ ես խիթալի,
 ձեր բարոյից՝ կասկածելի •

Քիայն երդնում՝ յարև ըււանի ,
 ձեղ արքանեակ՝ եմ պիտանի :

Անհեճառիան :

Ինձ գլխովին՝ է ծաղրելի ,
 ձեր բոլորից՝ բան խորհելի :
 Թէ կեանս կամիք՝ ուրախալի ,
 է շատ խորին՝ մտածելի :

Խորագիտութիան :

Խնդիր ունիմ՝ առ արքայի ,
 խոհեմութեդ՝ բարձրագահի •
 այլ զի է բանս՝ խոր և գաղտնի ,
 առանձնութեդ՝ է խնդրելի :

Խոհեճառիան :

Թող խաժամուժ՝ 'ի բաց ցրոճի ,
 զի կայ խորհուրդ՝ 'ի տաճարի :

Խորագիտութիան :

Ահա եղև՝ իմ խնդրելի ,
 զի ոչ մնաց՝ ոք թշնամի •
 ոչ նոյն էր խրատ՝ բարեխառնի ,
 չտալ տեղի՝ գաւաճանի :

Գծուարութիան :

✱ 'ի դէպ ժամու՝ յատեան հասի ,
 ըլծուին առնուլ՝ տարակուսի •
 վիհք են հիգոյս աստի անտի ,
 խոհեմութի՝ ինձ աստ պիտի :
 Գիտէք զորդւոյն՝ անառակի ,
 զանցս յանցանաց՝ և ըղգարձի •
 արդ յոտըս հօրն՝ եկաւորի ,
 զեղջ 'ի սրտի՝ է 'ի բերանի :

Արդարութի՛ ըզդէմ՝ ունի ,
 Թէ հօր գթոյն՝ չես արժանի .
 նախանձ եղբօրն՝ ձախողակի ,
 նոզին զինու՝ վառեալ բերի :
 Ողորմութի՛ մայր գթալի ,
 ըզդարձ անկեղծ՝ փոյթ ընդ ունի .
 ուստի՛ ՚ի սոյն՝ ապաւինի ,
 կրտսեր խոնարհ և յուսալի :

Արդ դժոճարինն՝ ո՛րպէս դիւրի ,
 ինձ յայտ արա՛ խոհեմդ արհի :

Խոհեմութիւն :

Դժոճարութի՛ մնաց ոչ մի ,
 յետ լինելոյն՝ որպէս պատմի .
 զի դժոճարին՝ էր բան դարձի ,
 զոյգ ընդ ներօղ՝ հօրըն սրտի :

Արդ եկելոց՝ սոցա ՚ի մի ,
 նախանձ ՚ի զուր՝ ՚ի հուր խանձի .
 ճարդարութի՛ ամբողջ պարհի ,
 ՚ի հաշտութե՛ կամաւորի :

Ողորմութի՛ ուր պատահի ,
 ճշմարտութե՛ ճանասլարհի ,
 արդարութի՛ խաղաղութի ,
 որդի ը հօր՝ սերս համբուրի :

Յոսահապոտութիւն :

* Աւանդ , զի ես կանխաւ չեկի ,
 յայս բեմ գտիչ՝ ճար անճարի .
 վասն այն կայէն ընդ յուդայի ,
 կորեան անյոյս՝ ՚ի խաւարի :

Արդ զի՛նչ հնարք՝ յուսահատի ,
 կայցէ , յորժամ յուսահատի :

Խո

Խոհեմութիւն :

Զգօնութի՛ յաջ իմ բազմի ,
 և գերզգօն՛ յահեակ բարձի •
 աք լիցին՛ քեզ հովանի ,
 յանձուկ ճգունս՛ պատերազմի :
 Վահան յուսոյ՛ կալ ՚ի դիմի ,
 ուր յուսահատ՛ գայ թշնամի •
 պարսաքարեալ՛ հանգոյն դաւթի ,
 զքստոնէար բլուր՛ գողիւթի :
 Անյուսութի՛ մատնիչ գաղտնի ,
 յիմարութի է՛ բա՛ յայտնի •
 զամենազօր՛ աջ հզօրի ,
 տկար գրէ՛ ներեւ չարի :
 Իսկ յոյս է լոյս՛ ՚ի խաւարի ,
 որ փարատէ՛ ըզմէգ սրաի •
 յ՛ստոյգ մեղայն՛ ապաւինի ,
 որով ան՛ հաշտ գտանի :
 ՚ի սոյն առ զայն՛ վճիռ բանի ,
 յոյս ոչ երբէք՛ յամօթ առնի •
 ուր մնտի՛ յոյս Յի ,
 ՚ի դժոնարինս՛ յուսահատի :

Յանդգնութիւն :

Ուրեմն եթէ բարւոք քննի ,
 ինձ մեղ գնեւ՛ ո՞ր յանդգնի •
 զի ես յուսով՛ զուսով զանցեալ ,
 բուռն հարկանեմ՛ ամէն բանի :
 Մեղուցեւոյս՛ յոյս մեղայի ,
 կայ ընդ յուսոյ՛ և խիւլայի •
 և տնանկիս՛ դեռ կայ տեղի ,
 մեծանալոյ՛ յայլուամ հաղի :

Զուր է երկիւղ՝ երկիւղածի ,
 անդ է խրանուլ՝ ուր մտածի •
 ո՞հաւանի՝ խղճահարի ,
 որ շատ ահիւ՛ գլթէ զքարի :
 Ես միշտ նաւեմ՝ աջողակի ,
 հողմավարեալ՝ արշաւակի •
 խնդամ, եթէ՛ ելքն է բարի ,
 ո՛չ զչարիմ՝ ընդ ելա չարի :

Անհիւսկեմութիւն :

Ընդ վայր ուրեմն՝ ես դատէի ,
 զյանդգնութիդ , և ատէի •
 այժմ ծանեայ՝ ո՛վ սիրեցի ,
 զյարգ իմոյս՝ բարեկամի :
 Քանզի և ես՝ եմ այնպիսի ,
 յար և նման՝ քո այդ փորձի •
 ո՛չ յաջ հայիմ, և ո՛չ յահեակ ,
 այլ ընթանամ՝ իբր ուղղակի :

Խսկեմութիւն :

Վա՛նք երկոցունցդ՝ որոց ելք մի •
 կորուստ անել՝ ՚ի վախճանի •
 եթէ ապրիք՝ հրէշք լինի ,
 թէ կորնչիք՝ է արժանի :
 Այդ են անշուշտ՝ գործ յիմարի •
 որ անբանից՝ նման վարի •
 զգօն մտաց՝ կանոն դրի ,
 առնել բարիս՝ առանց չարի :
 Ամիս գնացք՝ հանգոյն կուրի ,
 ՚ի խորխորատ՝ հարկաւ բերի •
 Իսկ իմաստնոյն՝ ընթացք ուղղի ,
 միշտ աչալուրջ՝ յապահովի :

Եւ արդ 'ի բաց կացեք հեռի ,
 գուք յիմ գրանէս՝ վաղվադակի •
 հոյլք մոլութեց՝ անբերելի ,
 ծաղք ծայրայեղ՝ յամէն կարգի :

Արիած + Գործաւնիան :

* Իսկ ինձ ո՛ր ելք՝ ճանապարհի ,
 որ նախադրօք՝ փակեալ պահի •
 յորժամ արկած՝ յանկարծակի ,
 զինև պատէ՝ շուրջանակի :
 Համբերութի՛ յոբայ գովի ,
 շուշան զերծաւ՝ յալեաց ծովի •
 փրկեաց նոցա՝ աջ հզօրի ,
 նոյն և հասցէ՝ ինձ տկարի :
 Բայց մարդկօրէն՝ զի՛նչ առնելի ,
 ուղղաշաւիղն՝ անգամ շո՛ւարի •
 ուր ոչ կայցէ՝ դաշտ փախաաի ,
 և ոչ տեղի՝ անդ թաքաաի :

Խոհեմաւնիան :

Մեղաց երբեք՝ հարկ ոչ լինի ,
 այլ փորձ ևեթ՝ փորձաքարի •
 'ի փորձութի՛ միշտ ըստ կարի ,
 ինր թողացոյց , ոչ աւելի •
 Սկիզբն յայնժամ՝ է քաղելի ,
 իմաստութե՛ , ինն երկիւղի •
 որ զայս մատեան՝ սերտ ուսանի ,
 'ի փորձութե՛ անփորձ պահի :
 'ի նոյն 'ի կարգ՝ այբուբենի ,
 համբերատարր՝ տառ վերծանի •
 երկայնամիտ՝ թէ գտանի ,
 քաղէ զպտուղ՝ պատուհիրանի :

Իսկ փորձ տխմար՝ անհամբերի ,
 տեսիլ անդոյ՝ է փշաքերի •
 զի կերք անկիրթ՝ անձին բերի ,
 վերընձիւղել՝ զհոյլըս չարի :
 Ի պակասիլ՝ և ևս շնորհի
 հոգւոյն յոգւոյ՝ ապաշնորհի ,
 խոպանանայ՝ մոլախոտի ,
 յարօտ այսոց՝ անապատի :
 Երկաքանչիւր՝ այս վիճակի ,
 յոլովք են ցոյցք՝ օրինակի •
 զի՛ կայ քո մարդ՝ նայել չարի ,
 և ոչ սիրել՝ զստոյգ բարի :

Սփռւնիւն :

✠ Կամիմ և ես՝ կալ յայս կարգի ,
 բայց անկարօղ՝ եմ առ հարկի •
 զի ՚ի վերայ դալ՝ վտանգի ,
 ստախօսել՝ բերանս հարկի :
Ահա առ իս ապաւինի
 անձն՝ ակամայ մարդասպանի •
 զոր հարցանեն՝ արք ատենի ,
 և ես ժխտեմ, ո՛ւր գտանի :

Խոհէճոտնիւն :

Թէ ոչ առ սուտ՝ սիրտդ յօժարի ,
 բերանդ անսուտ՝ միշտ բարբառի •
 զստոյգն յայտնել՝ ոչ պատուհիրի ,
 այլ սուտ խօսել՝ արգելանի :
Խնդրակք հարցին՝ աթանասի ,
 ո՛ւր աթանասն՝ այն գտանի :
Այժմիկ ասէ՝ զայլըն տեսի ,
 լիք հեռամուտ , գուցէ փախչի :

Տեսեր, զի քօլ՝ արկ ճշմարտի,
այլ բան չթանց՝ իւր ոչ ստի:
Եթէ սիրտ քո՝ առ իմր ուղղի,
ուղիղ տայ բան՝ քո բերանի:
Բայց թէ յատեան՝ դատաւորի,
երգմամբ ստոյգ ինչ խուզարկի,
յայնժամ յայսնեւ՝ հարկաւորի,
մամ ոք՝ զիսկն յիրաւի:

Արդ եկեւոյգ՝ մեր առաջի,
տամք քեզ երգուումն՝ ասել յայսնի.
դու հաւատանս՝ սըտախօսի,
թէ վճիռ տաս՝ պատուհասի:

Սփռեալիան:

Ո՛չ հաւատամ՝ իմում լեզուի,
թող թէ այլում՝ անիրաւի.
ես զիմ պատիժ՝ ստէպ գտի,
գտցէ և նա, երբ ծանակի:

Խոհեմութիան:

Շատ է աւուրս՝ դատ ատենի,
զի խոնջեցան՝ աւագանի.
աչխատելոց՝ հանգիստ պիտի,
ին՝ ի պարտէզս՝ իջուք աստի:

Օրինակ. ք:

Աւարտութիան:

Ի շղիւ մեր՝ յարդի գրախտին,
թու՛նիմ անքայ՝ ճեմել յարդին.
գուցէ և ո՛չ՝ սողմոնին,
իւր այն զբօսանք՝ այսքան էին:

Ձի ուր հանգչի՝ առաքինին
 հողուվ, ոսկերք՝ իւր պարարին •
 անդ միախորհ՝ ընկերք նորին,
 նորափետուր՝ գոյ, զարգարին :

Այլ բերկուլթի՝ իմ առանձին,
 զի քո և իմ՝ շէն միտք կրկին •
 այլ երկու աչք՝ ՚ի մի բերին,
 նոյն տեսութի՝ առարկային :

Ձի կշռութիգ՝ խոհականին,
 ծանրի հանգէտ՝ իմ կշռորդին •
 և իմ վճիռք՝ ընդ քո կշռին,
 միախորհուրդ՝ հաւասարին :

Խոհէճուլթիան :

Եւ կարի քաջ՝ առած դաւթին
 ՚ի մեր հայի՝ շաղկապ սրտին •
 թէ զի՞ բարի, զի՞ վայելուչ,
 բնակել եղբարց՝ ՚ի միասին :
 Քանզի աղբիւր՝ երկուց է մին,
 և՛ արգարոյն՝ և՛ խոհէճին •

Թմի՝ ակն առաջին,
 միտք անվրէպ՝ դատաւորին :
 Իսկ ուր երկուքըն փեռեկին
 ըստ ինքնակամ՝ ինքնագլխին,
 տիրէ միտք՝ չար, սատանային,
 և իրաւունք՝ անիրաւին :

Աւելութիան :

Ակնարկութի՞ կամայ վեհին,
 ես ՚ի պահեստ՝ դնամ գահին •
 ձեզ աստ ՚ի զո՛ւարձ՝ թողու՛մ վայրին,
 ըղբարեխառն՝ հովի՛ւ բարին :

Բարեխառնութիւն :

Քաջ խորհեցաւ՝ արթուն արին ,
 ըղյանկաւորն՝ և զըստ իրին .
 զի ինձ անկ է՝ ըզբերկրալին ,
 ձեզ տնօրինել՝ զուղիղ բանին :
 Թողու՛մ զ'ի դէս՝ ժամանակին ,
 մարդոյ զքօսանս՝ դիւրիչ անձին .
 այլ արգելում՝ միշտ զաւելին ,
 քան զպայման՝ խոհականին :

Գայլակողութիւն , կամ դաբողութիւն :

✱ Ես այր որսորդ՝ եմ անդատին ,
 Թափառական՝ յերեսս դաշտին .
 լեռն զլեռնայն՝ սովեալ յանձին ,
 'ի հայթհայթել՝ ըզգիւտ հացին :
 Ի ուք իմաստուն՝ աւագանին ,
 զի՛ նախանձիք՝ շինականին .
 Թողեալ զհող՝ ձեր ատենին ,
 ընդ վայր յաճիք՝ 'ի մեր տեղին :

Խոհեմութիւն :

Չոր ինչ ասէ՝ մեզ մտացին ,
 մեք հեշտալուր՝ լինիմք նմին .
 լուր դու և ինձ , ան զգործին ,
 լարեա՛ զաղեղն՝ որ 'ի ձեռին .
 Չկտեա՛ զայդ լար նետաձրգին ,
 ըստ ուժեւոյ՝ քո քաջ բազկին .
 յաւել քարչել՝ կարկամ կրկին ,
 բուռն առնելով՝ շատ սաստկագին :

Գայլակողութիւն :

Եթէ քարչեմ՝ ըստ քո բանին ,
 լար և կամար՝ զոյգ բեկանին :

Խոհեմութիւն :

Եւ մեք թէ բուռն՝ առնեմք ամսին ,
 զիարդ տոկամք՝ ծանրաբեռին •
 ասա այսպէս՝ գեղջուկ խորհին ,
 ոյք 'ի դատել՝ զընկեր բերին :

Բամբասանք :

Մի զարմացի օր իմ ընդ մին ,
 զի շէնս ողջոյն՝ է ըստ ամին •
 արք տմարդեք՝ բողորովին ,
 պաճարամիտք՝ դիրտք Տին :
 Ո՛ւր 'ի սոսա՝ հետք նշմարին ,
 քաղաքավար՝ մեր քաղաքին •
 մեք նուրբ և քան՝ զաթեղացին ,
 սոքա սոպեռք՝ այդէնածին :

Խոհեմութիւն :

Ո՛վ բամբասող՝ քո ընկերին ,
 ըստ բարձրամիտ՝ վայրաբերին •
 քո նախատինք՝ քո աշխարհին ,
 քեզ թշնամանք՝ են գլխովին :
 Նենդ կայ իսկ քո՝ 'ի սուտ կշռին ,
 գիւղ ընդ քաղաք՝ զոյգ կշռողին •
 կշռեա՛ ըզքեզ՝ ընդ քո վերին ,
 ատցես , ո՛ր է լու առ փղին :
 Տի նա , զառածն՝ ա՛ռ ոլորտսին ,
 կշռեա՛ միայն՝ զանձն առանձին •
 տէս , զի սլարծանք՝ քո անկանին
 առ օյ՝ մինչ 'ի գետին :

Խոհարհութիւն :

Քի քաջ է խորհուրդդ՝ խոհականին ,
 խոհարհութի՛ք՝ վերբերողին •

ԹԵՐ ՕՂԱՅՕՂ՝ ԲԱՆՔ ՀԱՎԱՐՄԻՆ ,
 ՓՔՈՅՈՒՆՈՅՅՔ՝ ԻԼՐԼ ԱՂԱՅԹԻՆ :
ԱՂ Հարցանեմ՝ և ես վեհին ,
 զայլ կարեորս՝ միշտ խոնարհին •
 Ի՛նչ , կամ ո՞րպէս՝ միաբանին
 խոնարհութի , և շուք գահին :
 Նոյնպէս կարծի՝ յոյժ դժոճարին ,
 գովեստ և փառք՝ խոնարհ սրտին •
 և խիթալի , գուցէ խառնին
 և ստութեք՝ ընդ ճշմարտին :

ԽՈՆԱՐԿՈՒԹԻՒՆ :

Դի՛ր գու ըլքո՝ հիմն ՚ի վեմին ,
 խոր ՚ի խոնարհ՝ անդրդոճեւլին •
 Թող ՚ի վր՝ շէնք կառուցին ,
 բարձրապատի՛ն՝ մինչև յերկին :
 Դու միշտ ծանիր՝ զարմատ քոյին ,
 զի մարդ տկար՝ ես հողածին •
 Թէև նշանք՝ քև կատարին ,
 զայդ ան՝ տուր տոճողին :
 Թող գովեսցեն՝ ամենեքին ,
 դու գուռն ամուր՝ դիր բերանին •
 շթուէնք սրտիդ՝ բարբառեսցին ,
 շէն իմ սոքա , այլ՝ իմ հաստչին :
 Չեն ինչ ընդհատ՝ գովեստ անձին ,
 և սուտ պարսաւ՝ կեղծաւորին •
 Երկաքանչիւր՝ միով փորձին ,
 քարամբ բանից՝ դիմախօսին :
Խոնարհութի՛ ընդ ճշմարտին ,
 են հարադատ՝ ծնունդք սրտին •

եղբայր եղբոր՝ օգնեալ, օգնին,
քաղաք ամուր՝ լինին ինքնին:

Արդարութիւն:

Արդար են բանք՝ մերոյ վեհին,
և մշտայաղթ՝ ինքնակալին.

բարձր է վիճակ՝ և խոնարհին,
յարդարութե՛ն՝ դատաստանին:

Խոհեմութիւն:

✱ Հարցեց ինչքեզ՝ եղբայր իմ հին,
արդարդ ասես՝ ինձ զերաւին.

գործք մեծամեծք՝ մեր աշխարհին,
արիութե՛ն, թէ ինձ պարհին:

Արդարութիւն:

Գիտէք զօրէնս՝ իմ ատենին,
գամ յանաչառ՝ պատասխանին.

է գործօնեայ միայն արին,

այլ քե բարւոք՝ լինի բարին:

Քաջին աջն է՝ վանիչ մարտին,

այլ սիրտ վառեալ՝ շարժիչ նորին.

ոչ և շինողք՝ կան շինու՛նաճին,

բայց գործն է գործ լը ճարտարին:

Եթէ խորհիս՝ և ըզվերին,

մծաբան՝ լինիս խորին.

ամենակալ՝ ձեռն հզօրին,

առնէ ինչ ոչ՝ առանց բանին:

Իմաստութի՛ն՝ ծանեաք զորդին,

որով եղեալքս՝ և կեամք կրկին.

արդար է հայր՝ լը միաճնին,

հոգւով՝ ի սէր՝ բարեխառնին:

Խոհեմութիւն :

Ահա արդարեւ՝ զարժանին ,
 գտի զարդարն՝ իմում գահին •
 Նիսա՛ ի տեղի՛ սողումնին ,
 կշիռ արդար՝ դատաստանին :
 Քանզի և դատք՝ մեր ատենին ,
 բազում մասամբք՝ ՚ի քեզ հային •
 ըզքեզ տեսից՝ տալ զըզձալին
 խաղաղութի՛ մեր աշխարհին ,

Բարեխառնութիւն :

Ուրախութե՛ տօն՝ առ օրին ,
 օրըս լիցի՛ վն գահին •
 եկայք մի մի՛ աւադանին ,
 երկիր պագցուք՝ նոր արքային :
 Ես երկրորդեմ՝ զմաղթելին ,
 սոյ երբեմն՝ ՚ի լուր դաւթին •
 բարձրացուսցէ՛ սր մեր կրկին ,
 զաթուռ որդւոյն՝ քան զճնողին :





Գ Ո Ր Օ Վ

Ա Ր Դ Ա Ր Ո Ի Թ Ե Ա Ն :

Օրինակ . ւն :

Ա ն ի ր աւ ու ը ի ն :

Որ իրաւունք՝ են չարութեան ,
 արքայանալ՝ ումեք յինքեան .
 գլուխ նստիլ՝ այս բազմութիւն ,
 առանց բազմաց՝ մեր ընտրութիւն :
 Խոհեմ անուն՝ ոք բռնական ,
 զարդար անուն՝ գնէ փոխան .
 ուր հարցանել՝ մեզ ըզմի բան ,
 իշոյ գլուխ՝ եղաք այսքան :
 Չիմ թշնամին՝ իմ յանգ իման ,
 կանգնել ոսոխ՝ ինձ յաւիտեան .
 շաւ է լինել՝ ինձ անձնասպան ,
 քան տեսանել՝ զիմ գաւաճան :

Ա պ ա փ ա ճ Բ ու ը ի ն :

Չերկաթ ծեծել՝ ՚ի ջերմութիւն ,
 զարդիս է խրատ՝ մեզ պատուական .
 անէ եկայք՝ զայդ լուծ խոտան ,
 խորտակեցո՛ւք մեք ՚ի սկզբան :
 Մինչ զև եկեալ՝ արքայ յատեան ,
 նախ ես գրաւեմ՝ զարքայարան .

մի ձայն հանից՝ աղատութե ,
 իսկոյն խմբին՝ խօշաց խուժան :

Խորագիտութիւն :

Ոչ ոք դատի՛ զայդ , անարժան ,
 բայց կայ խորհուրդ՝ և ևն արժան •
 մի կեղտ աւցուք՝ ըզվատ անոճան ,
 ապստամբից՝ յայս փրութե :
 Թողցո՛ւք ասեմ , զոտս անպիտան ,
 գլուխ գացուք՝ մեզ պատճառական •
 յորրս է որս՝ աղնոճական ,
 արին՝ գահիս այս պահապան :
 Ապա թէ ոչ՝ առանց հիման ,
 ո՛ր ոք ետեա՛ բարձրութի տան •
 և ո՛չ առանց՝ ճարտարութե ,
 ներհուն անձանց՝ վճարեալ բան :

Խորամանկութիւն :

Ո՛վ խորագէտ՝ խորհրդական ,
 ժամաւաճառ՝ երկբայական •
 ահա եհաս՝ արդեօք՝ արքայն ,
 քանզի շտեմ՝ ես ոտնաձայն :
 Օ՛ն փախիցո՛ւք՝ հանգոյն մկան ,
 իւրաքանչիւր՝ ՚ի ծառի իւրեան •
 քուսին յաղթեաց՝ ՚ի խորհրդեան ,
 անքիտօբէլ՝ ՚ի կախաղան :

Արդարութիւն :

* Ձի՛նչ ինչ լսի՛ նորալուր բան ,
 արժանալուր՝ մերում ունկան •
 խաղաղութե՞ր , խռովութե՞ր ,
 ասո՛ւք ինձ գիտել՝ դո՛ւք զերկոսեան :

Թէ իրաւանց՝ գոյ եղծական ,
 կամ կեղեքիչ՝ ժողովրդեան .
 երբ ոչ ազգէք՝ ինձ առ վայրկեան ,
 կայ պատուհաս՝ օրհասական :

Խորագիտութիւն :

'Ի լաւագոյն՝ կամք՝ 'ի սահման ,
 ըստ յաջողել՝ անութի .

զի հաղթք չարին՝ ունայնացան ,
 և համախոհք իւր՝ ցրուեցան :

Տր պահեցէ և առ յապայն ,
 որ ոչ ծնցի՝ այլ ինչ նման .

անիրաւին՝ և լուր անուճան ,
 մի լուճիցի՝ 'ի մեր սահման :

Արարութիւն :

Արին՝ գահիս՝ կայ պահապան ,
 դու խորագետ՝ լէր գունապան .

Խոհեմն ինձ հայր՝ խորհրդական ,
 կենաց կցորդ՝ ընդ բարեխառն :

Օրէնըսգետ՝ պետ դարբու թե ,
 և գանձապետ՝ յիշողական :

Լոյս իրաւանց՝ անշիջական ,
 ճշմարտութի՝ ըստ բիբ ական :

Եւ արբանեակք՝ իմ պաշտաման ,
 են աշակերտք՝ ճշմարտութի :

Երբ տեսանէք՝ զիս՝ 'ի ցաւման ,
 զողորմութին՝ հանէք յատեան :

Ուր մերձաւոր՝ գայ ազգական ,
 զիս ծանիցէ՝ օտարական :

Միակ իմ փոյթ՝ միակ վախճան ,
 գէտակն ունել՝ միշտ ուղղութի .

անս .

անըստերիւր՝ կենաց սահման ,
 պահել զառ մեզ հասաչինս պայման :
 Զի առարկայն արդարութեան ,
 մի և երրեակ՝ է լն հիման .
 հատուցանել՝ զոր պարտական ,
 հասաչինս , անձինս , ազգի մարդկան :

Աճառարութիւն :

Շնորհ յոյժ ունիմ՝ իմաստութե ,
 պարգևելոյ՝ քում մեծութե .
 զի օրինօք՝ արդարութե ,
 յունչ արարեր՝ զոր էր արժան :
 Արդ բողոքեմ՝ քեզ ո՞ր իշխան ,
 առ հասարակ՝ զորդւոց մարդկան .
 անձանց ճեղքարց՝ զպարտիս հոգան ,
 այլ նոյ՝ յոյլք զլանան :

Արդարութիւն :

Քեզ պատուէիրեմ՝ արդ անխափան ,
 օրէնագէտդ՝ ըզմեծ զայս բան .
 հան ծաղկաքաղ՝ ոսկի մատեան ,
 պատուէիրանաց՝ տեանքն լրման :
 Կարդ և կանոն՝ ժամ պաշտաման ,
 դիր՝ ի պատիւ՝ նձութե .
 և ոյք կրօնի՝ առնեն ինչ զեան ,
 ես հատուցից՝ պատիժ տրժան :
 Ոյր ողջ են միաք , դիցէ միշտ ջան ,
 պատուէլ զնձ՝ ուն արժան .
 զի որ պատուէ , նոյն և պատուէի ,
 յիւր արարչն՝ ի յաւիտեան :
 Ապա թէ ոչ՝ ըմպէ աստ դան ,
 յինէն լն ջափ իւր՝ բաւական .

և անդանօր՝ տանջի այնքան ,
որոյ բնաւին՝ չկայ որքան :

Օրհնոք :

Տ՛ր իմ արքայ , այդ քո հրաման ,
է կատարեալ՝ կանխաժաման .
Ոսկի տառիւք՝ անդ ՚ի բնութի ,
աթ պաշտամունք՝ գրոշմեալ գրտան .
և շնորհք անունք՝ այլ պատուհան ,
՚ի նոյն յեռեալ՝ ընդելուզան .
Այլ թուլութի՝ չ չարութի ,
և ոչ ՚ի մի՝ հայի մատեան :

Խորհուրդ մի տամ՝ խոհեմութի ,
հոգ տանելոյ՝ նոր գարատան .
ուր անաղօտ՝ լոյս գիտութի ,
պայծառասցի՝ եօթնաջահեան :
՚ի նոյն գարպաս՝ այլ վարժարան ,
գալրասկտաց՝ արքայութի .
ոյք մարդեացին՝ ՚ի ծագ ուսման ,
ածապաշտ՝ կարգիս լրման :

Աւարտութի :

✠ Ձե՛նչ դու առ այս՝ հայր խոհական ,
չեցէ՛ արդար՝ բանս գործնական :

Խոհեմութի :

Ձայդ ՚ի վաղուց՝ մեծ ճեմարան ,
կանգնեաց իմ աջ՝ զգօնութեան .
և գերզգօնն՝ պատկանեաց զայն ,
իւրաքանչիւր՝ ազգի լրման :
Տեսէք և զոր՝ յուխտ սրբազան ,
կարգ , որ է փառք՝ տանն արամեան .

զոր բազմարդիւն՝ Միսիթարայ
Թեւադրեցի՝ զգօնուԹեան :

Աւրարուի :

Մնայ արդեօք՝ յարկեալ հիման
վր շինել՝ վայելչական .

փոյթ և եռանդն՝ սկզբնական ,
վառ պահեսցի՝ մինչ ՚ի վախճան :

Աջ որ կամաւ յամբ ընթանան ,
յուզուոյ անտի՝ ՚ի յեաս մնան .

Իսկ որ յանհոգս՝ առկայանան ,
նոյլին հոգւով՝ յետադառնան :

Բարեխառնուիւն :

Ինչ մի և այլ՝ կարևոր բան ,

աղդել վեհեցդ՝ կայ իմովսան .

առ ուղղութի՝ ուժէ միայն ,

ձեր օրինակ՝ ժողովրդեան :

Ձի և՛ արդար՝ և՛ խոհական ,

՚ի սոյն կանոն՝ են միաբան ,

Թէ որ առնէ՝ զասացեալ բան ,

անձախօս՝ Թո՛ւի բերան :

Աւիւնի :

Գոյն այդ սահման՝ է իմ բնութի ,

ոչ բան , այլ՝ գործ , խնդրել արժան .

զի զի՛նչ ՚ի ճահ՝ զինուճորութի ,

ճառել՝ Թէ սուր ոչ է վահան :

Այլ որ գիմէ՝ իբր ախոյեան ,

ձգէ զգունդ՝ զհետ իւրեան .

ընդ ճասպաղիս՝ առնել արեան ,

՚ի նոյն և սիրտք՝ իւրոցն եռան :

Արդարութիւն :

Արդարացի՛ այս ամենայն ,
 պահեալ ծուլից՝ զիւրեանց սրայման •
 զի թէ զհետ երթալ՝ հեղգան
 օրինակին , շատ ըմպեն դան :
 Հանգա , ուն եմք մարբան ,
 և համագործ լիցուք որ կան •
 սիրտ մեր կանխեալ՝ քան զբերան ,
 դիտճ կարգալ՝ մեզ օգնական :
 Եկայք ճաշել՝ զաղնուէական
 սէր՝ ընդ բաժակ ուրախութե •
 պէտք են առ ժամս և հանգստեան ,
 ՚ի պէտս անդրեն՝ աշխատութե :

Օրինակ • ք :

Հոգին դաբախաւ Տարմայ :

Մնոյշ անոյշ՝ լինի , անբայ ,
 սեղան սաարատ՝ առաջակայ •
 միայն և յիս՝ տէր վերակնեա՛ ,
 որ կամ սովեալ՝ յոյժ բազմօրեայ :

Արդարութիւն :

Աղքատ մմն ես՝ ոյր ոչ ինչ կայ ,
 չոչ զոք ունի՛ որ ինչ մի տայ •
 եթէ՛ օտար ոք՝ բռնանայ ,
 և զողեպահ քո՝ գողանայ :

Հոգին :

Ես ճոխս երբեմն՝ աղքատացայ ,
 մինչ ծառայիս՝ ՚ի գուռն անկայ •

արդ փշրանայ՝ մնամնորա ,
պղնձաղին՝ զայն ինձ զլանայ :

Արդարութիւն :

Ո՞վ ես ո՞վ դու , զարդարն առա ,
ո՞ր թշնամիդ այդ՝ չար ծառայ .
յայլագուռնեալ՝ դիմացդ ծանեայ ,
զարմքո աղնիւն , և բանդ վկայ :

Հոգին :

Հոգի եմ ես , անտէս՝ իմա ,
մարմնոյս իմ այս՝ հողանիւթեայ .
բանապաճոյճ՝ տը գերակայ ,
արդ իւր մարմնոյն՝ դո՞գ , գերեալ կայ :
Ես սնուցի՝ կաթամբ զնա ,
ստոճարացաւ՝ ի յակորայ .
հիւժեայ փոխան՝ զիւր տը ահա
սովալուկ , դու դատ արա :

Արդարութիւն :

Ա՛յր դու՝ անձին ես դու վկայ ,
զի խեղճ ՚ի.քեզ՝ բնաւ չկայ .
զի՞ բամբասէս՝ ըլլքո ծառայ ,
որ տիրանալ՝ ետուր նմա :
Տկարն ՚ի.քեզ ինձ զօրանայ ,
թէ ոչ կամօք՝ միտք թուլանայ .
արդ զօրացի՞ր , սաստեան նմա ,
ոչ անսաստէ , մուկըն՝ դառնայ :
Զաներևակդ՝ ո՞ւր ետես նա ,
զի մարթասցի՝ գուլ դիմակայ .
երևելի երբ նա քեզ կայ ,
հա՛ր ըզգլուխն , և ջախջախեան :

Չհաց և ջուր՝ անգամ, ժխտեալ,
տես թէ սրպէս՝ զգաստանայ •
աղաչելով՝ զայդ մուրանայ,
Է չորաքեկն իսկ՝ գոհանայ :

Հոգին :

Ոչ ոք առ քե՛ս արդարանայ,
արդար ես ի՞նչ, ես ինձ մեղայ •
չատ փորձեցի, այլ փորձ չեղայ,
զի մարմինն է՝ անբան ծառայ :
Ցորչափ ՚ի կամս՝ իւր թողանայ,
նոյնչափ հոգին՝ թշուճառանայ •
ցորչափ լլկեալ՝ տկարանայ,
այնչափ հոգին՝ կարողանայ :

Այլ աղաչեմ, դու ի՞նչ օգնեալ,
յայս մի նոճագ՝ ինձ ճար արա •
զոր ինչ կապտեաց՝ չար սատանայ,
տուր ՚ի ձեռաց առնուլ նորա :
Ես ձեռագիր՝ տամ ըզմեղայ,
գրեմ զսրգ՝ անսուտ վկայ •
զիմ հին տաղանդ՝ դու ինձ շնորհեալ,
յայսմ հետէ՝ յիմ փոյթ նայեալ :

Արդարութիւն :

Չես արժանի, զայս քաջ գիտեալ,
երթ գթու՛թես՝ աղօթս արա •
ահա կրկին՝ քեզ աւետչեայ,
կրկին չափով՝ շնորհք իմ ահալ :
Միով զքեզ՝ նոր կազդուրեալ,
միւսով սրչափ կարեալ՝ շահեալ •
այլ զտուրեալդ՝ իսպառ կարեալ,
ընդ աշխարհ՝ մարմին, և սատանայ :

Հոգին :

Բանքս զհանրո՞ք քաղցր ես անքայ,
 բարւոյո՞ք բարին՝ 'ի գէմըս գայ .
 'ի քեզ արդեամբք՝ քաջ խմացայ,
 է՞բր արդարոյն՝ սիրտ 'ի գուլթ գայ :

Աւրարո-Բիւն :

Այլ ըղբանիդ՝ պատճանուն խմա,
 ողորմութե՞՛ ժամանակ կայ .
 ընդ անցանել՝ ժամու նորա,
 արդարութի՛ միայնակ գայ :
 Բայց խկութե՞ք՝ վայ է նմա,
 որ ատենին՝ այնմիկ մնայ .
 զի թէ յայժմուս՝ անհոգ գնայ,
 անդ անագան՝ 'ի զուր ողբայ :

Մարմն շարախօս զհոգւոյն :

* Տէր իմ արդար՝ և յիս նայեա՛ւ,
 քո գթութե՞ք՝ առ իս խնայեա՛ւ .
 անգութ հոգւոյ՝ հանդիպեցայ,
 որ միշտ մարմնոյն՝ հակառակ կայ :
 Մանուկ էի՛ և ծերացայ,
 օր մի ուրախ՝ շեցոյց ինձ սա .
 ընդ պատանի՛ երիտասարդ՝
 տիս՝ անդբօս, ունայն անցայ :

Աւրարո-Բիւն :

Զոր հարցանեմս, զարդարն ասա,
 ապաթէ ոչ, անխօս խուսեա՛ւ .
 նախ՝ ողջութե՞դ մնաս ինչ գայ,
 'ի խստամբեր՝ վարուց դորա :
 Երկրորդ՝ գուցէ յանցանք քո կայ,
 ոյր վս՝ հոգին՝ քեզ խստանայ :

Երրորդ՝ ասեա, թէ ծերացայ,
այր չարատանջ՝ զխորդ շատ կեայ,
Մարմինն ։

Զաւուրջու թի յանձին կալայ,
լն կանոնին՝ զոր հոգիս տայ •
ասկաւապէտ՝ և չափաւոր
կենօք՝ ՚ի կեանս յերկարեցայ ։
Յանցանք առ իս՝ ո՛ր մերձենայ,
ուր մեղանջէլ՝ պարապ չկայ •
այլ իմ բողոք՝ անդրէն դառնայ,
որ տեսանել՝ ինձ ո՛ր մնայ ։

Աւերարու թիւն ։

Տխմար գեղջուկ՝ դու ինձ անաս,
աւակ պատմեմ՝ զոր նոր լո՛ւայ •
քո պէս անխելք՝ այր անտալայ,
դայ յաղօրիս՝ որ քաջ աղայ ։
Ոչ տեսանէ՝ ջուր առ նմա,
որ հողմաժար՝ զիւրև դառնայ •
ո՛ր, հարցանէ, է ջուր դորա,
որ հոլովի՝ չառնու ըղկայ ։
Լսէ ասել, անջուր է սա •
միայն հողմն է՝ շարժիչ դորա ։
Տխմարն ասէ, զայդ հասկացայ,
բայց հարցանեմ, ջուրն ուստի՞ դայ ։
Կրկնէն լսողք, լո՛ւար ահա,
չէն պէտք ջրոյ, հողմով դառնայ ։
Կրկնէ ախմար, ա՛իս, իմացայ,
բայս ես ասեմ, ո՛ր ջուր, ասա՛ ։
Յօրինակիս՝ ըղքեղ իմա՛,
որ յեղյեղես, որ չտեսայ •

ասեմ,

ասեմ, ահա՛ կեանքաբազմօրեայ,
 ասեա այն, բայց չապրեցայ :
 Հոգին՝ մաքուր ցորեան աղայ,
 որով մարմինդ՝ յաւիտեան կեայ •
 դու ջուր խնդրես՝ դառն 'ի մեռայ,
 նա քաղցրասիւզ՝ քեզ ոգի տայ :
 Տխմօր մարմին, երթ նախ իմա,
 զի՛նչ է հոգի, և որով կեայ •
 յայնժամ տեսցես՝ զի՛արդ դառնայ,
 անիւ՛ կենաց՝ զոր նա քեզ տայ :

Մարմինն :

Քանզի հոգի՛ անմահ մնայ,
 զանցաւորացս՝ ինչ ոչ հոգայ •
 այլ ինձ հողոյս՝ կայ և մնայ,
 հողադարձիլ, շատ օր չկայ :
 Գո՛նէ ասեմ՝ սակաւօրեայ
 կեանս գրգանօք՝ աստ փափկանայ •
 Թէ խոստանայ՝ Թէ, և ինձ տայ
 անմահանալ, անսամ՝ նմա :

Արարութիւնն :

Արդ յայտնեցեր, Թէ ուստի՛ դայ,
 ջուր խորհրդոց՝ յանձրն դժնեայ •
 որ յարութե՛ ոչ հաւատայ,
 անցաւորիս՝ նա զանձն իւր տայ :
 Ո՛վ անհաւատ դու քրիստոնեայ,
 ո՛չ քեզ յառնել՝ գիր խոստանայ •
 և անհաւատն՝ անգամ յուսայ,
 Թէ յարութի՛ յաւիտեան կայ :
 Զայդ և արդար բեմս վճիռ տայ,
 աշխատութե՛ վարձ միշտ մնայ •

և որ հաստցին՝ եղև ճառայ ,
 զանանց զկեանս՝ վարձ ստանայ :
Արդարութին իմ ո՛ւր մնայ ,
 թէ սոսկ հոգւոյն՝ պահի խիլայ •
 ո՛չ և մարմին՝ կից գործունեայ ,
 պարտի հանգչիլ՝ զոյգ ընդ նմա :
Քեզ յարութե՛՛ օրինակ բա՛ ,
 ցորեան մեռեալ՝ կենդանանայ •
 Թրթուր ննջէ , թիթեռ դառնայ ,
 լուսին պակաս , և լրանայ :

Մարմին :

Շնորհքս ունիմ՝ շատ , քեզ , անբայ ,
 զի ուսուցեր՝ զես զանդգայ •
 բայց մի ցասնուր , այլ դատ արա ,
 զաղքատս ք ճօխս՝ մի համարեա՛ :
Հիմ զմարմինս՝ որ մահանայ ,
 թաղէք ՚ի խոր՝ ըստօրերկրեայ •
 իսկ լծակից՝ հոգիս , որ կայ ,
 ամբարձաթուիչ՝ գոյգ արժունայ :
Եթէ ՚ի փառս՝ նա խոյանայ ,
 էր գործակցին՝ իւր ոչ մնայ •
 Թէ ՚ի տանջանս՝ ուրեք գնայ ,
 զի՛ անանձին՝ տուժեացի նա :

Արդարութին :

Զոր ինչ ասեմ՝ քեզ , որոճա՛ ,
 ջանիրաւիմք , ո՛չ ես , ո՛չ դա •
 արդարըն միշտ՝ արդարանայ ,
 ուր քո խելք կարճ՝ տկարանայ •
Եւ արդ քեզէն՝ իբաւ արա ,
 հոգւոյ՝ մարմնոյ , զի՛ նչ խտիր կայ •

Եւ զսա իշխանն , և զու ծառայ ,
 նա բանական , զու զի՛նչ , ասա՛ (... անբան) :
 Հոգի աննիւթ՝ անմահ մնայ ,
 մարմին ինքնին՝ հող , հողանայ •
 Թէ ոչ հոգին՝ ՚ի նա դառնայ ,
 յառնել երբէք՝ անկարանայ :
 Գործոց նոյնպէս՝ զարգա՛րն ասա ,
 միթէ քե՛ր չափ՝ հոգիդ անսայ •
 զու լոկ լսես , զայս ինչ արա՛ ,
 այլ չառնես ինչ՝ առանց նորա •
 Խորհել , խօսել , գործել՝ նմա ,
 գիտես անկ է , քեզ ոչ մնայ •
 Խարխուլքո տան՝ մահ յաւեր գայ ,
 հոգիդ բընակ՝ մեկնի և գնայ :
 Արդ զու քեզէն՝ ուղիղ կշռեա՛ ,
 և զերկոսինդ՝ հաւասարեա՛ •
 միթէ կարճիկ՝ ՚ի կշի՛ւ գայ ,
 յուտեստ , ՚ի զգեստ , ք այր հակայ :
 Մի ամաչեր , զի ես ծառայ ,
 այլ տիրանալ՝ գէ՛թ ամաչեա՛ •
 զհետ հոգւոյն՝ երթալ ճեպեա՛ ,
 այլ նա արծո՛ւի , զու ես կըրթիայ :
 Զոր ինչ ասէ՛ քեզ նա , արա՛ ,
 քննայ՝ է բան նորա •
 զոր արգելու , և զոր ասեայ ,
 մի թախանձեր՝ որպէս տղայ :
 Հլու ելոյդ՝ քեզ ոչ մնայ ,
 այլ ինչ հոգալ՝ յերկրի վերայ •
 այլ վերանաս՝ երբ հոգիդ գայ ,
 յերկրէ յերկինս՝ փառօք նորա :

Խորագիտութիւնն ։

Տէր իմ արքայ՝ եկ հրամայեա՛ւ ,
յատեան գահիդ՝ ուր դատ մե՛ծ կայ օ
այր Է եղբօր՝ յապաժոյժ գայ ,
արիւն գաղտնի , չկայ վկայ ։

Օրինակ . Գ ։

Բ Ո Ղ Ո Ք Ա Ր Ե Ա Ն ։

Մերձատրն սպանելոյն ։

Մ
րդարուԹե՛ն՝ ատեան արդար ,
զարիւն 'ի բայց՝ 'ի բեմէդ տար օ
որ բողոքէ՛ միշտ անդագար ,
և ոչ տայ Թոյլ՝ քեզ և դագար ։
Կորեաւ 'ի դաշտ՝ փոքր իմ եղբայր ,
գտան իւր ձորձք՝ արդ 'ի վաճառ օ
յորրս և նիչ՝ նիչ՝ արեան կայր ,
վախեմ , զենաւ՝ որպէս ոչխար ։
Արդ յոյր ձեռին՝ ձորձ նորա կայր ,
ահա յատեանդ ածի՛ զայն այր ։

Մայնօղն ։

Գիտեա՛ ի՞նչ իմ , զառնըս եղբայր՝
ոչ մարդ եկեր , այլ՝ գաղան չար օ

Արդարութիւնն ։

Այր դու անգուԹ , և կի՛մ խեղառ օ
աւարառու՝ գաղանաբար օ
գաղանաբեկ՝ Թէ անկեալ կայր ,
զարեան սպատանա՛ զի՛ գողացար ։

ԱՅԸ

Այլ ո՞ր պատմեաց՝ քեզ ո՞վ յիմար ,
 թէ ոչ էր մարդ , որ զայդ արար •
 չէ՛ մարդ անշուշտ , այլ՝ դազան չար ,
 որ գիշատէ՛ ըզմարդ արդար :

Գեղարձօն-Ռիան :

Ապա թէ ոչ զինչ է պատճառ ,
 արիւնըսուշտ՝ աչացդ , ո՞վ այր •
 քեզ հայեւին վկայ արդար ,
 որ քեզ ցուցցէ՛ զտեսիլ վատթար :

Մարդասպանն :

Ես հայեցայ՝ ՚ի լիճ յանտառ ,
 և մաքրեցի՛ ըզբիծ , թէ կայր •
 զինչ այլ կայցէ՛ անտեսարար ,
 ուր չեք արեան՝ և ոչ նշմար :

Արդար-Ռիան :

Գո՞ղ սիրտ ՚ի դող՝ լեզու երկայր ,
 ՚ի քո ծուղակ՝ քե վակեցար •
 թէ դու անպարտ ես իսկաքար ,
 զի՛ վաղ ՚ի գէմս քո նայեցար :

Խորագիտ-Ռիան :

Թո՞ղ աներեան՝ զերեան ՚ի վայր
 կալցի , կարծեալ՝ մաքուր իսպառ •
 տեսէ՛ք , չետես՝ ըղկարմրածայր ,
 ՚ի ծոծրակին՝ չի՛թ մի նշմար :

Մարդասպանն :

(Ո՞ւր ցնդեցաւ՝ և զանխլարար ,
 արիւնն զանձամբ իմով՝ ցայս վայր •)
 ոչ տեսանեմ , զն , ՚ի բաց տար ,
 նշան յանձին՝ զարեանն արդար :

ՉԳՕՆՈՒՆԻԻՆՆ ։

Ես գաղա լուճայ՝ բան անաչառ ,
 զոր քո բերանդ՝ մուռնջ որոճայր օ
 ո՛չ այն իսկ էր՝ զոր գու լուճար ,
 երբ պաղատէր՝ այն այր չ վայր օ
 Ասէր լալեօք , գթա՛ Քղբայր ,
 ո՛չ ծածկի այս՝ ոճիր քո չար օ
 Թռչունք տանին՝ լուր լռաբար ,
 զարեան հեղտյ՝ միշտ վայրապար ։

Մարդասպանն ։

Առակ է բանդ՝ այդ զրաբար ,
 ուր ո՛չ թռչուն անգամ անդ կայր ։

Արդարունիւն ։

Ահա քեզէն՝ բանիճդ անկար ,
 Թէ բաց 'ի քէն՝ գաղան չկայր ։
 Բայց հարցանեմ՝ և այլ պատճառ ,
 զի՛նչ գործ էր քո՝ 'ի գաշտ յանտառ ։

Մարդասպանն ։

Որսալ ելն՝ զերէս յայն վայր ,
 և 'ի գաշտի՝ տեսի զայն այր ։

Արդարունիւն ։

Ե՛րա քեզ ողջոյն՝ եղբայրաբար ,
 եթէ փախեալ՝ օտարաբար ։

Մարդասպանն ։

Ողջոյն տուճաք՝ սովորաբար ։
 Ո՛չ ՝ զի՛նչ ասեմ ՝ նա անկեալ կայր ։

Արդարունիւն ։

Ա՛յ ժանտաժուտ՝ ահա լուճար ,
 ըզքո իսկ բանդ՝ յայտնաբարբառ օ
 վկայե

Վկայեցեր՝ և ուրացար ,
 զի կենդանի էր՝ այն արդար :
 Տուք արբանեակք՝ դուք չարաչար ,
 անօրինիդ՝ տանջանս խապառ .
 զի յայտնեցէ՝ փոյթ պարզաբար ,
 զոր ոչ կարաց՝ ծածկել ըզսար :

Մարդասպանն՝ ի փանջանս :

Այն այն ես դադան չար ,
 պատառեցի՝ զանմեզ ոչխար :

Արդարութիան :

Պատառեցէք՝ և դուք զայդ այր ,
 ՚ի չորս մասունս՝ զոյդ հաւասար .
 և կախեցէք՝ ՚ի ձողածայր ,
 ՚ի չորս կողմանս , տեսցէ աչխարհ :

Դ Ա Տ Ը Ն Չ Ի Ց :

Չիւեալն խաչափորս :

Լ ուր աղաչեմ՝ զսկանս անլուր ,
 որ ինձ եղև՝ ՚ի յայսմ աւուր .
 տոճեալ էր իմ՝ ցտիրատուր ,
 քսակ ոսկւոյ՝ պայմանաւոր :
 Չի մնացէ՝ աւանդ առ իւր ,
 տալ ինձ ՚ի ժամ՝ պիտանաւոր .
 արդ զի եհաս՝ օր կարեւոր ,
 խնդրեմ , ժխտէ՝ իբրև անլուր :

Արդարութիան :

Ունին վկայ , եթէ ետուր ,
 կմ գիր առե՛ր՝ յետկարաւոր :

Խաչափութիւն :

Ո՛չ տօր , ո՛ր էր՝ վկայ , գիր ո՛ր ,
միայն տօր է՝ իմ յոյս բողոր :

Արարութիւն :

Այլ ծանուցեալ՝ է տիրապետ ,
'ի քաղաքիս՝ ճոխ փառաւոր :

Խաչափութիւն :

Այն մեծ էր՝ տօր , անուն իւր ,
փաքրկացաւ՝ արդեամբք այսօր :

Արարութիւն :

Ե՛րթ գու հանգիր՝ ի ներքս անդորր ,
և մեք մտցուք՝ ի խորհուրդ խոր :

Ձե՛նչ արարից՝ նստեալս յաթու ,
խորհրդականք՝ հանձարաւոր :

Գերագոհութիւն :

Չայդ ի՛նձ թողցեա՛ արքայդ հզօր ,
կոչեմ յայլ սէսս՝ ըղտիրապետ :

և ի՛ գալուստ իւր՝ աստանօր ,
գայցէ իսկոյն՝ և խաչապետ :

Տերափութիւն :

Ձե՛ կոչեցիք՝ շոյտ փութաւոր ,
ըղծառայ ձեր՝ վաստակաւոր :

Գերագոհութիւն :

Տառայութի՛ կայ քեզ այսօր ,
աշխատաշի , բայց շահաւոր :

կամի տօր մեր՝ յանձնել գանձ նոր ,
քեզ ՚ի պահեստ՝ աւանդապետ :

Տերափութիւն :

Ինձ շնորհ է մեծ՝ արդիւնաւոր ,
ո՛չ նեղութի , սոյն այս բան իւր :

Գեր .

ԳԵՐԿԳՕՆՈՒՐԻՆՆ ։

Ո՛րք ես և դու՝ սիլ խաչատուր ,
մի տար 'ի գանձ • այլ՝ սմա տուր ։

Խաչատուր ։

Տայ սևմ կամի՝ տրս փառաւոր ,
բայց նախ առից՝ յառնէս այսօր ։

ԱՐԴԱՐՈՒՐԻՆՆ ։

Ունի՛ս ինչ տալ՝ ցխաչատուր ,
տուր զայն , և առ ըզէր գանձ նոր ։

ՏԵՐԱԳՈՒՐ ։

Այո՛ տր իմ , փոքր աւանդ գոյր ,
'ի սոյն ժամու՝ տաց զինչըս իւր ։

ԱՐԴԱՐՈՒՐԻՆՆ ։

Դու խորագէտ , երթ տէս , և լուր ,
վճարիցէ՞ զաւանդ բոլոր •

ապա սոսի ցտիրատուր ,

Թէ գանձք եդան՝ 'ի մէնջ այլուր ։

Դ Ա Տ Տ ՈՒՐ Ե Ի ԱՌԻ Ի ։

ԳՆԷԼ զՄԱՍԻՍԱԿ ։

Դ՛ատ արա ինձ՝ արքայ հզօր ,
առ զըկանաց՝ այս իմ եղբօր •
որ վաճառեաց՝ ինձ հինգ սափոր ,
իւղ մեծադին՝ յանցեալ աւուր ։
Վերին երեսք՝ էին աղոճօր ,
մատամբ 'ի վայր՝ գտաւ մրուր ։
արդ այս սուգանք՝ եղեռնաւոր ,
զիմ կործանէ՝ ըզտուն բոլոր ։

Տեղեք Ի-դաձառնա :

Գիտեա՛նք իմ, յանցանքն է իւր,
 զի մեր զաձառն՝ էր կամաւոր •
 շատ նայեցաւ, զննեաց 'ի խոր,
 և յանձն էառ՝ գնել զայն օր :
 Գարձեալ՝ չէ այս գործ ինչ մեր նոր,
 այլ սովորոյթ՝ գոգցես հանուր •
 Ոչ և ինքնին՝ սա խղճաւոր,
 ցորեան մեզ տայ՝ խառնաբնգոր •
 կէսն է գարի, և այլ փշուր,
 կէս փուտ՝ հոտեալ, անպէտ յալիւր :

Աւարտութիւն :

'ի բայց կացէք՝ անք նենգաւոր,
 յիմ ատենէ • գիտէք, կայք՝ ո՛ւր :
 Թէ բողոքէր՝ ոք չքաւոր,
 ես առնէի՝ դատ կարւոր •
 այլ ձեր բողոք՝ սուտ և խոշոր,
 արտաքսեացէ՝ ըզձեզ խոժոռ :
 Բազում մասամբք՝ էք յանցաւոր,
 ոյք պարապեալ կայք յառւտուր :
 Երթայք զհետ՝ սոցա այսօր,
 անք ատենի՝ արք զօրաւոր •
 տեսէք՝ թէ այր իւրաքանչիւր,
 իցէ՛ արդար՝ 'ի զաձառ իւր •
 Ապա թէ ոչ՝ զայր նենգաւոր,
 կորուսանեմ՝ ապէտաւոր :
 Շատ է նոյ՛ն ներել ցայսօր,
 կայ յայտմ հետէ՝ պատուհաս նոր :



Գ Ո Ր Օ Վ

Ա Ր Ի Ո Ի Թ Ե Ա Ն :

Օրինակ ին :

Խոհեմութիւն :

Փ անք պարծանաց՝ այս աթոռոյ ,
արիութիւնդ՝ առաքինւոյ •
քեզ անկ այսօր՝ այս գահ պատուոյ ,
ասէ արգարն՝ յուզիղ կշռոյ :

Ձի հասեալ կայ՝ մեզ 'ի մօտոյ ,
բռնամարտիկ՝ մարտ , վանեւոյ •

Ինչ միակի , այլ՝ երրակի ,

չար Յի , դիւի , մարմնոյ :

Ես ծերացեալ՝ լքայ յուժոյ ,

լոկ ուշ մնաց՝ խորհուրդ տալոյ •

արգարութիւնն՝ անպարապ գոյ ,

'ի բազմազբօս՝ դատից լրոյ :

Իսկ բարեխառն՝ սաստարեւոյ

անձնիւր անձինն՝ տքնի ոգւոյ :

հասցա արիդ՝ արիաբար ,

բունն հար՝ ըզմեր ըզմեծ գործոյ :

Աւերութիւն :

Արիք յարանց՝ քաջք ըստ հոգւոյ ,

մինաս , մինաս , գէորդ , արգոյ •

սարգիս , վարդան , վահան՝ հուժկու ,

ատոմ , մմբատ , դլուխք զօրու •

ԱՅԵ

Այր ընտրեցէք յարանց դասու ,
 ում զիմ անուն՝ եղից պատուոյ •
 արիաբար՝ յանգ հանելոյ
 գործ՝ զոր յանձնեն պատգամք վերնոյ :

ՄԷ զօրավարս և զօրահանս :

Մէք միաբան՝ մեզ 'ի ժամու ,
 զվարդան ընտրեմք՝ այր նոյ •
 որ մեր հանուրց՝ վեհ է պարու ,
 'ի կրկնակի 'ի ճակատու :

Ուր մեր գործ է՝ առն ըստ գլխոյ ,
 դա աչխարհի՝ վերակացու •

յեւս և 'ի մուտս՝ նոյն , արևու ,
 մարդկան , դիւաց՝ քաջ ահարկու :

Արդարութիւն :

Արդարասպէս՝ և յիմ կշռոյ ,
 'ի քեզ ծանրի՝ գործ մեր , քաջ դու •
 առաքինեաց՝ գահոյք արւոյ ,
 քեզ սեպհական՝ և 'ի հարց քո :

Արեւ Վարդան :

Ռջ առ պատուոյ ինչ ցանկալոյ ,
 հլու լինիմ՝ այդ խորհրդոյ •

այլ առ օգուտ՝ հասարակաց ,
 դիմագրաւիմ՝ մեր թշնամւոյ :

Ահա պատրաստ՝ կամ ես զինու ,
 ք հզօրին՝ պսակելոյ •

յոյս սաղաւարտ՝ է իմ գլխոյ ,
 վահան կրեմ՝ ըզհաւատոյ :

Սէր իմ , սուսեր՝ հոգւոյն աղդու ,
 կապեալ յաղդեր՝ գործի գործոյ •

գողջիք, ուր կամք՝ արշաւելոյ,
 եւ խոյացայց՝ նման արծունոյ:

Բարեխառնութիւն:

Ասա՛ւ եւ իմ՝ յաւէժ խրատու,
 խառնել զերկիւղ՝ եւ ի յուսոյ՝
 գովեմ զաշխոյժ ձիրքս ոգւոյ,
 այլ գովելին՝ է՛ ՚ի չափու:

Քանզի յանդուգն՝ յարձակելոյ,
 են խիթալի՝ եւք դիպունձոցոյ՝
 այլ աշաւուրջ՝ խաղացելոյ,
 աներկեան՝ յալթանակ գոյ:

Արդարութիւն:

Դարձեալ՝ դիտել՝ եւ զիմ՝ պիտոյ,
 զարդարութեան՝ ըզմէս կշուոյ՝
 են իրաւունք՝ մարանչելոյ,
 են անիրաւ՝ պատճառք կռունոյ:
 Իրաւացի՝ ընդդէմ մարմնոյ,
 եւ աշխարհի, դիւի, մարտ քոյ՝
 այլ անիրաւ՝ յուղակի,
 լինին յաշխարհ՝ կռիւք մարդոյ:

Արիութիւն:

Արդար ասէք՝ առանց ստոյ,
 նոյն եւ իմ կամք՝ ին՝ նոյ՝
 զի ժամանակ՝ է կռունելոյ,
 եւ ժամանակ՝ հաշտ լինելոյ:
 Չէ՛ եւ չէ՛ գործ՝ արի ոգւոյ,
 կագելչարաւ՝ ներհակ բարւոյ՝
 եւ ոչ է անկ՝ առաքինւոյ,
 կռունիլ երբէք՝ ընդդէմ սիրոյ:

Չէն արժանի անունն արւոյ,
 կարիճ արդեօք՝ սոսկ ձայնելոյ.
 արք բանակաիւք՝ յոչինչ պիտոյ,
 և կռուարարք՝ դանկի միոյ.
 քինախնդիրք՝ յանձին սիրոյ,
 և ասլաժոյժք՝ յարիւն գաւոյ.
 և՛ս առաւել՝ ՚ի պէտս հողոյ,
 տուօղք զանձինս՝ ՚ի հող մահու:
Այլ իմ անունն՝ արի ելոյ,
 էք երեքեանդ՝ արդիւնք միոյ.
 արդարու թիւն՝ պատճառ կռուոյ,
 խոհեմութի՝ ուղղեակ ուղւոյ.
 միաք օղջախոհ՝ առաքինւոյ,
 ինձ յուշարար՝ յամէն պահու:
Արդ ձեօք հանդերձ՝ որպէս կեւոյ,
 էմ, և պատրաստ՝ մեռանելոյ:

Արդարն արսէն:

✱ Արի արիդ՝ քաջ նահատակ,
 մեծըդ վարդան, վահան, արտակ.
 հաս, զի եհաս՝ պարսից բանակ,
 յարարատեան՝ դաշտ, ուր ագաք:

Արի Վարդան:

Առ ի՛նչ՝ գալուստդ այդ հոյլարձակ,
 պատճառ խնդրի՝ ինձ բացարձակ.
 իչխել կամի՝ ազգիս անթագ,
 թէ՛ և կրօնիցս՝ կայ հակառակ:
 Ձե՛ այլ ոգի՝ զգեցցիս, գոյ հարկ,
 տա հայրենեաց՝ սէր լի իւր յարդ.
 այլ՝ այլ ոգի՝ նոր ըլքեւ անկ,
 թէ՛ օրինաց՝ լինի ձեռնարկ:

Խահահանն խորէն :

Աստ երկոքին՝ զոյգ են սլատճառք ,
այլ առաւել՝ հաւատոց կարգ .
յաղէերս վառեալ՝ յիւր դէն 'ի կրակ ,
մոխրել խորհի՝ զայ յարկ :

Տաճար՝ քաճար աս :

Աղէ ո՛վ արք՝ հայաստանեայք ,
մեք աղգովիմք՝ վառիմք , եկայք :

Հմայեակ՝ հոգեւառեալ :

Զօրավարօք՝ քաջ զօրականք ,
ուխտի մանկամբք՝ սք քահանայք :

Յառաջադէմ գարեգին :

Ես ընդ քեզ եմ՝ ո՛վ շահատակ ,
ժամ է զինիլ՝ մեզ բովանդակ .
Թէև զարիւնս՝ հեղցուք համակ ,
արժէ . արժանն և յաղթանակ :

Արին լարդան :

Ո՛չ խնայեմ՝ յանձն իմ , ուսայք ,
'ի մահ գիմեմ՝ ես համարձակ .

ոչ առ մարդկան՝ որսալոյ փառք ,
այլ առ աստ՝ են իմ պարծանք :

Միայն դուք ա՛ղգ՝ և աղգականք ,
ձեզ ընտրեցէք՝ ի մահ , ի կեանք .

մի խոտորիք՝ յաջ և յահեակ ,
զհեա եկայք՝ իմ , միաբանք :

Այա թէ ոք՝ որպէս վասակ ,
յուզի գնայ՝ դեռ խոտորնակ ,

այժմէն անցցէ՝ յօտար բանակ ,
եր որոշին՝ օգիք , այծեայք :

Ձի իրազեկ՝ էք դուք աւագ,
 Տինչ՝ ի յետին՝ այր անաւագ •
 անմիաբան բարք, և մախանք,
 ըլմեր այգւոյ ցանկ քակեն ցանգ :

Զօրքն ամենայն :

Քաւ, մի լեցի, որպէս երգունաք,
 յարդ ընդ ցորեան մեր նք՝ խառնակ •
 սւր գտանեմք՝ զոք դժնդակ,
 քարկոծ առնեմք՝ բոլոր բանակ :

Աւելն Վարդան :

Հանգա, զի՛ կայք, զի՛ յապաղէք,
 մեծաւ, փոքու՝ զիմ հետ կալէք,
 լած ընդ մեզ՝ է, մի վախէք,
 ըզճակատու՝ փողցս հարէք :

Զմակարէն՝ աստ յիշեցէք,
 զոյգ ընդ դաւթի՝ պարսաքարէք •
 մի մի սամփսոն՝ առիւծացէք,
 նոր գեղեցոնք՝ արշաւեցէք :

Տի՛ նա՝ տերամք՝ քաջ զինեցէք,
 նք նշանաւ՝ զձեզ կնքեցէք •
 և զօրագլուխ՝ փրկիչ, տեսէք,
 նովաւ անշուշտ՝ դուք յաղթիցէք :

Մեր թշնամին՝ խրոխտ և սէգ,
 ՚ի սուր պանծայ՝ սուտ, և ՚ի տէգ •
 ՚ի ինր պարծիմք, պարծեցոնք մէք,
 յորոյ ՚ի սէր՝ մտաք ՚ի վէգ :

Եւք յաղթողական :

Յաղթանակ՝ մարտ հեղման՝ նք արեան,
 վարդանանց՝ քաջ արանց՝ արութեան •
 սխրաւ

սխրափայլ՝ սբ հոգւով՝ զօրութեան,
 մեզ վարդան՝ վարդ անոյշ՝ սրատունական:
 Առաւել՝ սերճապանձ՝ ՚ի մահունան,
 այս հանդէս՝ հաւատոյ՝ քաջութի.
 զի ներքինք՝ ոտնակոխ՝ ՚ի հնձան,
 իսկ վերինք՝ նոր սարուք՝ արդ ցնձան:
 Սբ սասկք՝ յանեղէն՝ ձեզ տունան,
 ընդ անմահ՝ վկայից՝ քաջ անունան.
 և արդեամբք՝ ձեր արեան՝ բազմացան,
 արգասիք՝ մեր հողոյ՝ զանաղան:

Օրինակ • Բ :

Խոհեմութի :

Մեռաւ վարդան՝ մեր, աննձան.
 ոչ հաւատամ, ննջեաց միայն.
 յորժամ շտեա, արիք անկան,
 անկեալք, նոքիմբք՝ ՚ի վեր յարեան:
 Թառամեցաւ՝ վարդըն մեր այն.
 ոչ. անթառամ՝ կայ ՚ի շուշան.
 վարդանուհին՝ զարմանաղան,
 Արիութի՛ք՝ հայրն է, նման:

Աւրարո-Բի-ն :

Եւ արդարեւ՝ էր մեզ արժան,
 ըզնա կարգել՝ հօրըն փոխան.
 այլ չէ օրէն՝ ՚ի հայաստան,
 կնոջ մարդոյ՝ դահ մեծութի.
 Ուր յայլ աղինա՝ և կոչ անունան,
 այս սետութեց՝ է իգական.

այլ 'ի բարբառ՝ մեր արամեան ,
լոկ համարի՝ շէզոքական :

Թող կատարի՝ 'ի մեր շուշան ,
Թէ՛ 'ի ներքոյ՝ փառք ամ .

Թագ ընկալցի՝ արքայու թէ ,
անտես ելով՝ յորդուոց մարդկան :

Բարեխառնութիւն :

Ես գիտէի՝ զիմ մի շուշան ,
գովեալ 'ի գիրս՝ դանիելեան .

որոյ հանգէս՝ իւր արու թէ ,
բարեխառնիս՝ փայլեաց յատեան :

Իսկ այս ո՞վ է , զորմէ է բան ,
ձեր գերապանձ՝ մեծ գովու թէ .

յոր 'ի ճգունս՝ արգիւնանան ,
մրցանք նորին՝ արիու թեան :

Խոհեմութիւն :

Քեզ 'ի մօտոյ՝ քաջ վիպասան ,
ականատես՝ կայ վրաստան .

Ուր ա՛ռ 'ի կին՝ իւր զշուշան ,
վրաց բգեշխ՝ վազգէն արքայն .

զոր էր ծնեալ՝ սբ աւաղան ,
'ի գէն դարձաւ՝ նա պարսկական :

Այնուհետե՛ւ՝ զօր ամենայն ,
տիկնոջ կամի՝ ամոքել զայն .

նա կայ անշարժ՝ իբրև արձան ,
մշտաչարչար , այս եօթընե ամ :

Այն փափկասուն՝ սրայծառ շուշան ,
փետի գանիւ՛ , բանիւ՛ , այնքան ,

որ թէ երկաթ՝ լինէր անգամ ,
ցարդ ցաւատէր՝ բախմամբ կուան :

Սով

Սով և ծարաւ՝ ընդ մերկութե՛ն ,
 քանտ և կապանք՝ յերկարեցան .
 դաւիթ գրեաց , սա կատարեաց ,
 ըզ վն քո՝ ըզմիշտ մեռայն :

Արդարութիւն :

Արդ յոր՝ ի կարգ՝ արիութեան ,
 սա վերածի , տես դու ինձ զայն .
 աշխարհ , մարմին , և սասանայն ,
 կոխան եղեն՝ միանգամայն :

Խոստովանող՝ ճշմարտութե՛ն ,
 սրտի առցէ՝ վկայութե՛ն .

Իսկ բոյս բարուց՝ տկարութե՛ն ,
 ծագ է թագին՝ արիութե՛ն :

Բարեխառնութիւն :

Այդ օրինակ՝ համբերութե՛ն ,
 բուն նախագիծ՝ է արութե՛ն .

ոչ յանունէ՛ որք քրիստոնեայն ,
 արդեամբք առկունն՝ կեցցէ միայն :

Քաջ հայելի՝ և սրբութե՛ն ,

ես վարկանիմ՝ զայդ սք շուշան .

զոյգ հօրամայն՝ բարուց արժան ,

վարդ ընդ շուշան՝ փունջ կապեցան :

Աւետար :

Չէզ աւետիք՝ նոր խնդութե՛ն ,

ակմբահոյլ՝ արդոյ ատեան .

Ժաման եղև՝ առ մեծ վարդան ,

դուստր իւր արի՝ մաքուր շուշան :

Չընթացս ելից՝ իւր կատարման ,

՚ի նոյն հանդէս՝ խիստ ճգնութե՛ն .

զերծեալ յառնէն՝ որ անարժան ,
 զիւր երկնաւոր՝ եգիտ փեսայն :
 Քանզի յաւուր՝ միում արքայն ,
 վազդէն ասեմ՝ ուրացօղն այն ,
 այնչափ էսո՞՞ գշխոյխ գան ,
 մինչ զի յոգիս՝ կայր ապաստան :
 Ես ընթացայ՝ տեսանել զայն ,
 առեալ տարայ՝ ՚ի խորշ մի տան .
 անդ հաւատով՝ աղօթական ,
 վերասլացաւ՝ առ սիրական :

Խոհեմութիւն :

Ահա այժմիկ՝ լցաւ քո բան ,
 արդարութե՛ն՝ անսուտ բերան .
 արժան գրեալն՝ արքայութե՛ն ,
 արժանացաւ՝ յերկնից խորան :
 Ուր ոչ խտիր՝ կայ սերական :
 գահակալել՝ արանց միայն .
 ահա՛ ասեմ , արին շուշան ,
 նստաւ յաթոռ՝ անդ բարձրութե՛ն :

Արդարութիւն :

✱ Արդ թէ՛ վարդան՝ էր , թէ՛ շուշան ,
 յերկրէ յերկինս՝ վերամբարձան .
 զո՞՞ ամբարձցուք՝ մեք յայս ասեան ,
 ՚ի գահ պատուոյ՝ Արիութեան :

Բարեխառնութիւն :

Եթէ ճակատ մարտի միայն ,
 զմեզ ստիպէր՝ գոլ մրցական ,
 ո՛չ պակասեն՝ քաջ զօրավարք ,
 և այրընտիր մեր զօրական :

ԱՄԸ

Այլ կարևոր՝ և այլ բանք կան,
'ի հանդիսի՝ արիութեան.

յաղթել անձինս յօժարութե,
պէսպէս կրից՝ 'ի ձե ցասման:

Խոհեմութիւն:

Բարիոք խօսիս՝ ո՛վ բարեկամ,
բարեխառնիչ՝ զամենայն բան.

արդ զոր ետուր՝ խորհուրդ պատկան,
'ի քեզ արդեամբք՝ յանկի շուքն այն:

Քեզ բարեխառն՝ անկ և արժան,
աթոռ մեր այս՝ իշխանութե.

զի ուր նստաք՝ մեք երեքեան,

կա՛լ հարազատ՝ մեր, և դու զայն:

Բարեխառնութիւն:

Այդմ պատուոյ՝ չեմ բաւական,
ես 'ի ժամուս՝ խորհրդական.

դայ ժամանակ, գիտեք դուք զայն,
ողջախոհաց՝ գալ յիմ ատեան:

Խորհուրդ յայժմուս՝ է յաղթական,
կալցի զաթոռ՝ մեր, խոհականն.

ոչ մարտ մղել՝ 'ի ծերութե,

օրէնս և եթ՝ տալ ժրութե:

Արդարութիւն:

Արդար իրաւ, քաջ է այդ բան,
ու՛մ սպասէ՝ ողջոյն ատեան.

զի ժողովեալ՝ բազմաց որ կան,
կանոն խնդրեն՝ արիութե:

Խոհեմութիւն:

Եթէ այդպէս՝ բարւոք դատիք,
ես տաց ձեզ այր, զոր խնդրէիք.

Մե

Մինաս արին՝ քաջամարտիկ ,
 Խմաստասէր՝ խոհեմ սաստիկ :
 Սա գահակալ՝ լեցի այժմիկ ,
 Երկնաբնակիչ՝ ասա աւասիկ •
 զի է վկայ՝ երագահասա ,
 ուր և խնդրէք , անդէ՛ն գաջեք :

Արդարո՛ւն :

Ամէ՛ն ասեմ՝ անաբիներք ,
 դա՛ է բարի , նման իւր չիք ,
 փորձ 'ի հանդէս՝ բիւրապատիկ ,
 Արի ութէ արիւս և կնիք :

Բարեխառնո՛ւն :

Համպա առ սա ո՛վ դուք մատնիք ,
 որ քաջ սրտի պէտքս ունիք •
 յաղթել կրից և արկածից ,
 հողւոյ , մարմնոյ , որ են կարիք :

Հիւանդն :

✽ Տէ՛ր իմ իշխան արքայաշուք ,
 Ինձ զո՛ր դարման և յոյս տայք դուք •
 'ի բժշկաց օգտեաց ոչ ոք ,
 ուր բազմամեաց հաշիմ ցաւօք :

Աղքատ :

Ես առաւել կամ ընդ կարեօք ,
 աղքատութե՛ս՝ տո՛ւնայտանօք •
 համբեր ասեն , ոչ տանին հող ,
 ուր որ ընոյր զիմ թափուր դող :

Տնանի :

Ինձ ո՛ր գացէ դեղ ինչ արդեօք ,
 որ կորուսի զինչքս կե՛նօք •

է

զի

զի մեծատուն էի և ճոխ ,
արդ չքաւոր՝ կարօտ բաղձօք :

Ներեալն հոգւով :

Ինձ չեն ինչ փոյթ բոլոր մարմնոյք ,
համբերէի նոցուն՝ կամօք •

այլ հոգւոր և մտաւոր ,

կիրք տագնապեն զիս յոյժ չարեօք :

Զբարբառալ :

Կարծեմ յիմ կիրս կաս գու մտօք ,

զբարատութե խոցեալ փշովք •

փոխան բարեաց՝ չարիք ուղիւսիք ,

յիս յորդեցին՝ բամբասանօք :

Աւին միաս :

✠ Ինձ լուարովք որդիք մարդկան ,
մի քան զմի՝ ունայնաբան •

չիցէ՞ լուեալ ձեր միաբան ,

զհամբերութի՛ դեղ նեղութե՛ :

Այս է հանդէս արիական ,

փորձ՝ ի փորձանս լինել միայն •

ոսկի զտի աստ՝ ի քուրայն ,

թող և զարծաթ կոկէ կռան :

է սեպհական՝ արիութեան ,

տոկալ յաւուրս անդ փորձութե •

համբերեցէք , գայ օր և ժամ ,

ձեզ վայելէ՛լ յերջանկութե՛ :

Ո՛չ և պաղոց՝ նախ ի սկզբան ,

դառն է ճաշակ՝ ըստ տապութե •

այլ թէ բարւոք հասունանան ,

յայնժամ՝ ի քիմս համեղանան :

Կարող է նոր ամենիշխան ,
 ձեզ այց առնել 'ի մի վայրկեան .
 որպէս եղեն հրաշիւք նշան ,
 աջով նորին շատք կանգնեցան :
 Այլ որ թողու ըղձեղ առժամ ,
 'ի կիրս յոբայ համբերութե ,
 կամ են 'ի խրատ , կամ 'ի սլասկ ,
 առաքինեաց արիութե :
 Քաջայարմար' է ստուգաբան ,
 արի անուան' ինձ , այրական .
 կնատ և վատ' այր անպիտան ,
 առաքինի չեհաս կողման :
 Եւ չար' ոչ այր , ոչ արական ,
 բարի , արի' բն տիրական .
 և չարասցես , այլ' արասցես ,
 թարգմանութի կրկին անուան :
 Է պարզաբար' արին , վահան'
 ընդդէմ բախմանց' չարին կողման .
 համբերութե և լուութե ,
 վանէ զՅ և զսառանայն :
 Չէն աղօթից իւր օգնական ,
 սուսեր հոգւոյն' նյ բան .
 սոքիւք յաղթին' ամենեքեան ,
 'ի հանդիսի մեր քաջութեան :

Տեճար :

✠ Կայ , աղաչեմ , դեզ կամ հնար ,
 արիանալ' ինձ մինչ իսպառ .
 որ չերկնջիմ , ո՞ր գայ և չար ,
 և միշտ ապրիմ' առիւծաբար :

Չի տեսանեմ, յոյժ է դժոճար,
 անդորրաւէտ՝ կեալ յայս աշխարհ •
 ցող, աւաղակ, առնեն թշուառ,
 այլք կողոստեն՝ և ՚ի վաճառ •
 Սով կամ հրդեհ, այլ պատահար,
 կենաց անգամ՝ տուգանք ընդ վայր •
 դատաւորաց՝ ոչ ասեմ չար,
 քայց և նոցին՝ աս յիս գումար :

Տկար :

Ինձ առաւել՝ ծով սպառնայր,
 ըզմահ, ընդ որ ճարին գուլայր •
 սասանութի՝ երկրի՝ վատթար,
 քայց ես չերթամ՝ յերիզ գաւառ :
 Մեծ ևս ասիւն, սարսափ ընդ վայր,
 բերէ կայծակն՝ այն շանթահար,
 խորշ ՚ի խորշէ՝ ղօղիւ ինձ ճար,
 խնդրեմ, գուցէ՝ և վայրապար :

Վեհերոս :

Ինձ ամ շնչին պատճառ
 աս արկանէ գողորդաբար •
 այժմիկ անկայց, կամ անկցի քար,
 այժմիկ կլցեն՝ զիս ընդ խաւար :
 Առ ձեռնարկել՝ ՚ի գործ դժոճար,
 յեւից խիթամ • խրտնում լ ճայր •
 ստէպ մնամ՝ անգործ վատ այր,
 չառնեմ և զոր լ իմ է կար :

Յանդուսին :

Ես զամ քամահեմ չար,
 միայն ինձ մահ՝ աս ուրոճաբար •

Եթէ և զայն չունել էր հնար ,
 ո՞ր այլ արի՛ ինձ նման կայր :
 Նա՛ , երկեղուկ՝ և մահ չտայր ,
 Թէ երբ կամիմ՝ յայնժամ յիս գայր •
 այլ Թէ հասցէ՛ յանկարծաբար ,
 յափշտակէ՛ զիս գողաբար :

Մ Ի ն ա ս :

Վա՛ն տգիտացդ՝ ընդ մի համար ,
 շողփաղփ բանից՝ ըստ խելագար •
 ոչինչ խորհիք՝ անձաբար ,
 ոչ և խօսիք՝ դէ՛թ մարդկաբար :
 Զի՞ չերկնչիք՝ զերկիւղ արդար ,
 զկրկնակի՛ անշուշտ , ուր կայր •
 առ յայ՝ որ է ձեր հայր ,
 որդիաբար՝ կալով պատկառ :
 Ո՞չ՝ ի մեղաց՝ ահ պիտենայր •
 որ է յեաին՝ և միակ չար :
 կորուսանող՝ յանչէջ հուր վառ ,
 ըզձեր հոգի՛ մարմնով իսպառ :
 Այլ երկնչիք՝ երկիւղ ընդ վայր ,
 ուր չիք երկիւղ՝ ասաց իսկ տառ •
 արդ լո՛ւարո՛ւք՝ զգօնաբար ,
 և տաց կանոն՝ ձեզ պարզաբար :
 Երկիւղ է զէն՝ իբրև ասպար ,
 տկարուԹԷ՛ տունէտլ սատար •
 ոչ վհատիլ՝ քեզ վայրապար ,
 այլ իւրտիւ , երբ մերձի չար :
 Ուր ահ և հոյն՝ իցէ տկար ,
 արին վառի՛ սուսերաբար •

ուր իւր ուժոյ՝ է հաւասար ,
 ան ցուցանէ՝ վահանաբար :
 Եթէ 'ի վեր է քան զիւր կար ,
 փոյթ ձեռնտու՝ հայցէ խոնարհ •
 Թէ ոչ եգիտ՝ յանպէտ աշխարհ ,
 յերկնից յուսայ՝ յոր միշտն յուսայր :
 Եթէ փրկէ՝ Թր բարերար ,
 նա շնորհ ունի՝ ծառայաբար :
 Թէ Թոյլ տացէ՝ և տիրաբար ,
 օրհնէ զնա՝ համբերատար :

Երեւոյ :

✠ Զի՛նչ է ապա՝ դեղ փրկարար ,
 'ի փորձութեանց՝ անտեսաբար :

Երեւոյ :

Գաղանորոգայթ՝ դիւին այն հնար ,
 զիս յահ յերկիւղ՝ կրթէ խապառ :

Մեհա :

Յօրէնս կենաց , զոր արդ ընձար ,
 կայր և սոցին՝ դարման ճարտար •
 յածեղէն՝ դիմեա՛ տաճար ,
 ապահովիս անդ , մի խիթար :
 Գիտէ փրկել՝ Թր , ոչ ուսար ,
 զմծապաշտօ՝ յուսապատար •
 որ յուսացաւն՝ 'ի Թր , արդար ,
 լեառն անսասան՝ է վիմաբար •
 Ո՛ւր են աղօթք՝ ձեր անդադար ,
 ում օրինակ՝ Թր զանձըն տայր •
 ո՛ւր է յոյս ձեր՝ զէն անվթար ,
 միայն առիթ՝ չարին մի տար :

Մի երկնչեք՝ տղայաբար,
 այլ անբ լերուք՝ արիաբար •
 մշտապատրաստ՝ արթուն լեք, վառ •
 վանեք տերա՛մբ՝ զբիւր և հաղար :
 Ուր հասանէ՝ տկար քո կար,
 գու ճով՝ ՚ի նոյն բունն հար •
 իսկ զոր կարծես՝ քեզ անհնար •
 աջն յաջողէ՝ ամենակար :

Երկնք :

Թէ յայտնապէս՝ փորձէ զիս չար •
 Թէ սատանայ, և Թէ աշխարհ,
 ո՛չ երկիցէ՝ մարմին տկար •
 Թէ և յաճ՝ յուսացեալ կայր :

Մի՛նաս :

Յասացելոցս՝ Թէ իմացար,
 երթ յանասլատ, տես զայր ՚ի յայր •
 զանտոնն ասեմ՝ մեծ աբբայ հայր •
 որ զդիւճօքն իսկ ծաղու գայր :
 Ե՛րթ և յայլ օր՝ ՚ի նոր գուամար,
 զոր բարեխառն՝ պատրաստ արար •
 անդ իմացիս, զի ո՛չ աշխարհ,
 և ո՛չ մարմին՝ ուժեն յարդար :

Օրինակ • Գ :

Մակար :

Ի՛նչ, փորձուԹիւնք՝ անասլատի
 օր լի օրէ՛ զինեւ պատի •
 աւանձնուԹի՛ էս ո՛չ գտի
 և յանգնակ՝ վայրս անմարդի :

Է՛ զի խորհուրդք՝ յածին սրտի,
 Թէ ոչ իսպառ՝ աստ ոք դատի •
 Է՛ զի միտք գան՝ չար հարարտի,
 Թէ յաղթեցեր՝ բուռն մարտի •
 Երբեմն եղբարց՝ ոք կարօտի,
 Երբեմն յանձնէ՝ իսկ ձանձրտի •
 Շորհք են հոգւոյն՝ ջուր հանգստի,
 այլ՝ աղբերակն՝ ո՛ւր, ոչ գտի :
 Արտօսը յաղօթս՝ երբ ինձ կաթի՛,
 հոգիս իսայտայ՝ իբր յարօտի •
 բայց դէք փոյթ գան՝ անապատի,
 յորոց անձն իմ՝ ոչ հանգարտի :

Անտոնիոս :

Արի մակար, այլ լեր արի,
 զի չես տղայ՝ այսքան տարի •
 հանգիստ բնաւ՝ խնդրես յերկրի,
 յաշխատութի՛ ծնեալ դերի :
 Ի՛նչ յաղթեցեր՝ դու աշխարհի,
 Թէ անապատ՝ հանգիստ գրի •
 ձանձրութե՛ մարտ՝ այսոյն չարի,
 չարակրութե՛ գերի վարի :
 Անդորրութի՛ հոգւոյն բերի,
 ուր յաղթութե՛ ելք կատարի •
 արդ համբերեա՛ քաջալերեա՛,
 ոյր ծամանակ՝ տեղի՛ պարհի :
 Պայքար դի՛ւաց՝ նշան բարի,
 զի առ բարեօք՝ բոյս է չարի •
 երկաթ ուռամբ՝ երբ չարչարի,
 գործի լինի՛ նա ճարտարի :

Մակար :

Ե՛ւ ո՛չ երկեայց՝ ուր երևի ,
ինձ այսըն ջար , որ ջերևի :

Անսոնիսս :

Ո՛չ երկիցես՝ ՚ի գիշերի ,
այն է իշխան՝ըն խաւարի •
և զոր ՚ի տունէ՝ նետ իւր թռչի ,
խորտակեսցէ՝ նշան խաչի :

Ե՛րթ հանդարտեաց՝ ՚ի քում խցի ,
առ այր հնազանդ՝ դև ոչ մերձի •
խոնարհ և հլու՝ ելոյր գլխի ,
ոտք հարկանին՝ ո՛չ ըզքարի :

Սարայել :

✠ Այդ ջանփ յանդուզն՝ այլու ժպրհի ,
որ փոյթ չունի՝ ըզմեր ահի •

՚ի ծաղ եհաս՝ ճանապարհի ,
գոլ ուղեցոյց՝ և աշխարհի :

Ո՛չ կարացիք՝ որդիք ջարի ,
առն միոջ՝ յաղթել հիւրի •
և ո՛ւր մնաց՝ ձեր ոյժ գիւնի ,
որ ոչն ուժէ՝ հողոյ երկրի :

Դեպ :

Ո՛չ ասրաքէն՝ և դու հեռի
չըջիս յայրէս՝ առն վեհի •

Նա զէն ունի՝ անվանելի ,
և զրահ հոգւոյն՝ անգծելի :

Բաղմօք մարտեաք մեք մի առ մի ,
յաղթող գտաւ՝ մենամարտի •

մի՛թէ դժոխք՝ առ հասարակ ,
ընդդէմ միոյն՝ ճակատեսցի :

Մարտայէլ:

Եկայք ելցուք՝ ժողովք չարի,
անդնդային՝ հոյլք խաւարի,
աս արկանել՝ գէթ, անառնի.
Եթէ երկեաւ, ապա յաղթի:
Եւ ոմ զի՛ զահի հարցի,
Երևեսցո՛ւք՝ նմա յայտնի,
'ի կերպս 'ի կերպս՝ մեր, քստմանէլ,
ախտից ցուցակ՝ գարշ հայելի:
Ես սողեցայց՝ չմամբ յերկրի,
հին օձ՝ վիշապս՝ եօթնագլխի.
այլ գլխաւոր՝ գլուխս լինի,
աւիւծագէժ՝ սէգ ամեհի:

Դեռ:

Ես մանչեմ՝ ըստ վարազի,
որ յորս այլոց՝ միշտ նախանձի.
Ես բարկութե՛ք՝ արջ կատաղի.
ձայն սրապաղեմ՝ կտոկանձողի:
Եւ ես խանչեմ՝ ցիւ վայրենի,
ծանրեալ յընթացս՝ լը կըրիայի:
Ինձ գայլութի՛ն՝ անկ ագահի.
յափշտակիչ՝ բարք կերողի:
Որկորատեան՝ շան փսիտղի
հանգոյն հաչեմ՝ ես սովելի:
Իսկ ես ոգի՛ պոռնկութե՛ն
բռւամ ոմ կինձ՝ 'ի վայրի:

Մարտայէլ:

Թող և վոհմակք՝ անթուէլի
բերցեն ըզբարս՝ բիւր գաղանի.

Ը աղոճիսու՛ խորամանկի՛ ,
 հանգոյն ըլտու՛ ռիակալի :
 Չորի աքցող , ժանտ բորենի ,
 խայտաբըլէտ ինձ՝ ընդ վագրի՛ .
 աղուն , զեռուն՝ չարաճըճի ,
 եղջերու՛նաքաղ՝ ընդ ճիւճաղի :

Անպոն :

✱ Տ՛ր լոյս իմ , կեանք՝ անմեկնելի ,
 յուճմէ՛ր երկեայց՝ ես , Ը դաւթի՛ .
 Խոր ապաւէն՝ կենաց իմոց ,
 ոչ դողացայց՝ ուստեք յերկրի :
 Ճակատամարտ յարեաւ դիւ՛ի ,
 հոյլք նորազէն՝ բանակ չարի .
 յոյս իմ յիճ՝ է կենդանի ,
 որ զարկանէ՛ զայն զգետնի :

Սարայէլ :

Ո՛չ երկնչիս՝ դու յերաւի ,
 յայսչափ ահեղ՝ պատերազմի .
 դու առանձին՝ անզէն դերի ,
 մեք չարազէնք՝ դիւճադնդի :

Անպոն :

Ո՛ր երկնչի , ճոչ ծիծաղի ,
 ընդ ձեր դուճար՝ այսպանելի .
 որոց ձայնք են՝ շառաչողի ,
 այլ ոչինչ ոյժք՝ մարանչողի :
 Թէ կայր ինչ թոյլ ձեզ հրամանի ,
 և մինդ էր շատ՝ ինձ տկարի .
 այլ յոչ ներել՝ բարերարի ,
 քիւր ձեր բանակք՝ յոչինչ գրի ,

Միւս ևս նշան՝ քաջ նշմարի ,
 անկար 'ի ձեզ՝ թոյլ վատթարի •
 զի՛ ոչ 'ի ձե՛ հոգեղինի ,
 այլ ձեացայք՝ լը անբանի :
 Յայտ արարեալ՝ ամօթ քանի՛ ,
 զի՛ նչ նախ էիք , զի՛ նչ ըղկնի •
 օն անդր , հանգոյն՝ ուրուհանի ,
 սք նշանաւ , կորէք խաչի :

Դե+ :

Երթամք գնամք՝ վաղձաղակի ,
 զի բուռն եղեր՝ մեզ ուժգնակի •
 այլ սիրտ գոնեա հավահարի ,
 հարցո՛ւք զդա՛ գան լը կարի :

Անպոն օ

* Խնայեա՛ տր տր՝ քո ոչխարի ,
 զոր պատառեն՝ գազանք վայրի •
 արի յօգնել՝ ինձ , տր , արի ,
 յամօթ լիցին՝ փաղանդք չարի :
 Փանք քեզ՝ փառաց թագաւորի ,
 դու՛ լոյս , և ո՛ւր՝ հետք խաւարի •
 և ո՛ւր էիւ՛ ցարդ , տր բարի ,
 հիմ՝ ոչ եկիր՝ լը դաւ չարի :

Յն :

Անտոնիէ , ես աստ էի ,
 այլ քաջու՛թեզ՝ 'ի տես կայի •
 յայամ հետէ՛ փոյթ ձեռնաու ,
 եղէց յամէն՝ պատերազմի :
 Եւ արարից՝ զքեզ անուհանի ,
 ընդ ամ՝ ոչորաս երկրի •

յարևելից՝ մինչ յարևմուտս ,
 նշան կանգնեալ՝ ուխտ աբբայի :

Անպոն :

Տ՛ր տ՛ր , անձն իմ՝ քեզ ծարաւի ,
 առնել ինչ մի՝ գործ ծառայի •
 տենչամ լինել՝ վկայ արի ,
 արեամբ , 'ի սէր՝ քո յաշխարհի :

Յս :

Դու ինձ վկայ՝ ես կենդանի ,
 միշտ մահացեալ՝ և կենդանի •
 լեր հեղինակ՝ սբջ ուխտի ,
 և օրինակ՝ անթիւ դնդի :





Գ Ո Ր Օ Վ

Բ Ա Ր Ե Խ Ա Ռ Ն Ո Ի Թ Ե Ա Ն :

Օրինակ • Խ :

Ողջախոհն Յուզէի :

Բարեխառն եմ, իմ վեհք բարուք,
բարեխառնեմ՝ ըզձեզ բարեօք •
բարեխառն իմ՝ անուն փառօք,
բարեխառն իմ՝ ողջ խորհրդովք :
Չեմ անարբուն՝ տղայ մտօք,
ոչ զառամեալ՝ փրփուր ալեօք •
այր կատարեալ՝ տիօք ամօք,
մշտադաւար՝ բերրի բաղմօք :
Գարուն ծաղկիմ՝ երփներանգօք,
աչուն, պտուղ՝ տամ արգասեօք •
նչ տօթ և ցուրտ, հնդիկք, մոսկովք,
այլ՝ այրարատ, խաւիա՝ դո՛գ :

Արարուսիւն :

Քն են արդիւնք, ժխտէ ոչ ոք,
բերք մարդկեղէն՝ լի արգասեօք •
ղապատ ընուս՝ սք ծննդովք,
և զանապատ՝ սք շուշանօք :

Անհատ աճէ՝ քե հասկ ատոք,
տչինչ ընդհատ՝ տեսակ զարմօք •
՚ի քեզ պանծան՝ միտք ողջախոհք,
և քե ցնծան՝ տուն և որդւովք :

Խոհեմութիւն :

Թէ ոչ կոչեն՝ ըզքեզ կոչուեք,
անբանաբար՝ լինին խնջոյք •
քեւ արծարծին՝ սիրտք զո՛ւարթուեք,
Թէ ոչ, քանդին՝ գինեաւ և տուեք :
Սպասք զարդուց՝ են քո սիրուեք,
վայելչականք, պարկեշտասուեք •
ոյք խոտորին՝ նորահարիւք,
ծաղբ անդ լինին՝ ծանր ծախիւք :

Յովէի :

Հնապա առ իս՝ անցէք ով գուք
աշխարհասէրք, մարմնոյ ըստրուկք •
լեք ողջախոհ՝ յստակ մտօք,
լցեց ըզձեզ՝ տոհմականօք :
Յիմոց անցեց՝ գիւրաւ առնուք,
չատ ձեզ խրատք՝ պիտանացուք •
Թէ տիրապէս՝ յուղի անձուկ,
գնան անբամբ միշտ ողջախոհք :
Բայց կատարած՝ լի է վարձուք,
և աննման՝ փայլէ փառօք •
ահա յովսէփս՝ ով սրբասուեք,
ձեզ օրինակ՝ կրկին դասուեք :
Չեզ ողջամիտ՝ նք միանձուեք,
նախկին իմ անցք՝ մինչ յայս դահոյք •
ձեզ բարեխանն՝ Յասուեք,
յետ պսակի՝ միտք իմ արթուեք :
Իմաստութի՛ն՝ հոգւոյն հարսուեք,
ասանէթ գոյք՝ իմաստնազոյք •
ասանէթայ՝ փեսայացուք,
յովսէփ լերուք՝ անձազոյք :

Ծառայն :

Յակոբ յլեաց՝ հայր քո ասա զոք ,
ասեալ կոչե՛ զաերդ իմ որդւոլք :

Յուլէի :

Խօթացեալ էր՝ լցեալ ամօք ,
առից զօրհնէք իւր կենդանեօք •
Թէ յամեցից , մի մնայք դուք ,
այլում պահու՛ զատեան թողցուք :

Պեպատիւն դահճապէս :

* Ո՛վ էր այս այր՝ քաղցր բարուք ,
մեղրածորան՝ աղբերակունք •
զգաստ , զգօն , շնորհք ՚ի շրթունք ,
զու՛նարթ տեսիլ , զու՛նարթուն ինձ գո՛գ :

Պեպատիւն Կրճապէս :

Ո՛չ գիտացեր՝ ցայս վայր արդեօք ,
զեգիպտոսի՝ փրկիչ խելօք •
փսոմփթոմփանէ՛ ո՛ր է այլ ոք ,
Թէ ոչ փեսայս՝ գիւցազնաշուք :
Սա յակոբայ՝ աճեցուն տունկ ,
որդեակ սիրուն՝ իւզ անոյշ , խունկ •
որ ընդ պէսպէս՝ փորձ անց բաղմօք ,
ոսկի ՚ի բովս՝ զտեալ կամօք :

Կահճապէս :

Զեբրայեցի՛ն՝ ասես մանուկ ,
արդ աճեցեալ , ծանեայ ստոյգ •
էս զնորայն՝ գիտեմ յատուկ ,
զառաքինի՛ զգործքս ծածուկ :
Ինձ ծառայեաց՝ մանուկս որբուկ ,
՚ի տան իմում՝ ոսկ գառնուկ •

այլ իմ երինջ, ասեմ, ջատուկ,
 գայլ գիշախանձ՝ եղև գաղաուկ:
 Անգամագիւտ՝ գտեալ յողոք,
 արատ դնէր՝ բամբասանօք.
 մինչ ողջախոհս՝ այս, սք մտօք,
 յանձն առ զբանտ՝ և կապանօք:
 Լո՛ւայ և զոր եցոյց փայլմունք,
 ըոյս՝ ի խաւար անդ մշտաբուղխ.
 տեսիլ մեկնէր՝ սք պատգամօք,
 զի ել երազ՝ արանց յամբուկ:

Քրճապէս:

Ահա նովին՝ եհաս կարգօք,
 յայս աշտիճան՝ պատուճոյ փառօք.
 փարաւունի՝ մուայլ ըզհոգ
 փարատելով՝ պայծառ մտօք:
 Յայնմ օրէ՛ բազուճ ամօք,
 սա զի գիպտոս՝ ելից բարեօք.
 ած և զհայրն՝ եղբարբք իւրովք,
 որ բազմացան՝ աստ աւելեօք:

Այլ ո՞ր երագէս:

Ո՛չ վայրապար՝ ինչ գիպուճածովք,
 ՚ի ճահ եղեն՝ դմա գահոյք.
 գիտէք, զի՛նչ ինչ՝ կրեաց բազմօք,
 որպէս լսեմ, մատաղ տիօք:
 Զյաչաղանս՝ չար մախանօք,
 զիւրոց եղբարց՝ պատճառանօք.
 զի էր ծաղկեայ՝ պատմուճանօք,
 յայտնիչ տեսլեամբ՝ զ՚ի վերուստ շուք:
 Ոյր վ՛ս յառնեն՝ եղբարբք ինունք,
 զարիւնն ըմպել՝ արք յանդգունք.

այլ գուժ միոյն՝ շարժեալ աղեօք,
 ետ արկանել՝ ՚ի գուբ ցաւօք:
 Խորհուրդ յաղթեաց՝ վերին կամօք,
 տալ ՚ի վաճառ՝ մահու մտօք:
 Խաբօղ խաբի՝ անխաբն իրօք,
 թէ գազան չար՝ կեր զիմ մանուկ:
 Արդ տեսանէ՛ս, զի սա առ մեօք,
 տնտեսութի՝ երկնից է լոկ:
 յոր սկզբանց՝ անկարծելեօք,
 փրկիչ տո՛ւաւ՝ մեզ գերի ոք:
 Թէ որոճեն՝ զայս վէպ մտօք,
 իմատօ քաղեն՝ շատ, ողջախոհք:
 և թէ յատեան՝ կանխէ միշտ ոք
 ողջախոհիս, կրթի բաղմօք:

Մարտին:

Եւ մեք եկաք՝ այնու մտօք,
 ո՛ւր է, մնամք կարօտանօք:

Ճատայն:

Հայր իւր հի՛ւանդ, մեռաւ արդեօք,
 վասն այն յամէ. Թո՛ղ, անցցէ սուգ:

Օրինակ. Բ:

Յ՛ւնէի Բարեխառն:

Ա ի և մի ոք՝ ՚ի մարդկանէ,
 թէև իցէ՝ փսոմիթոմփանէ,
 քոզցէ ապրիլ՝ ՚ի մահո՛ւնէ,
 տի՛ նա, սգալ ոչ զայնմանէ:
 Տեսէք, և զայս, ՚ի սկզբանէ,
 Իբր՝ ողջախոհ՝ բարեխառնէ:

անձին ըզմահ՝ միշտ յուշ առնէ ,
 յուսով հանգերձ , թէ՛ և յառնէ :
 Սուգ սիրելւոյ՝ չափով դնէ ,
 ոչ ծայրայեղ , որ խոտանն է .
 և ոչ անհոգ՝ զանձն իւր պահէ ,
 իբր անզգայ՝ զուրկ ՚ի բանէ :
 Նոյնօրինակ , և նոյն բան է
 ուրախութե՛ն յիմ կանոնէ .
 ուր բերկրառիթ՝ ինչ պատահէ ,
 խնդահ չափով՝ որ պատե՛հ է :
 Մի անպատկառ՝ ծաղր ՚ի ձայնէ ,
 այլ ծաղկաբոյս՝ յանոյշ սրտէ .
 զի որ յանչափա ինչ խնդայցէ
 ընդ անցաւորս , յետոյ լայցէ :
 Որ անպատճառ՝ խինդ ցուցանէ ,
 աշխարհ զնոյն՝ խենդ առձայնէ .
 որ անպայման՝ լը մանկանէ
 խայտայ յոչինչ , միտք ծանծաղ է :

Խոհէճու-Ռիւն :

Զկարգ որ չափ՝ անձին դիցէ ,
 ՚ի հարսանիս՝ թէ երթիցէ .
 ուր այր զարամբ՝ յելևելս է ,
 անչափ առնել՝ զոր ՚ի ձեռս է :

Բարէխառանու-Ռիւն :

Զգօնութե՛նդ՝ օրէնքն ասէ ,
 զարժանն , զոր սէրդ ինձ հարցանէ .
 չափով գի՛նին՝ ուրախ առնէ ,
 և իւզ՝ զո՛ւարթ՝ զոգին վառէ :
 Հաց՝ հացկերոյթ , սրչափ մեծ է ,
 սիրտ հաստատել՝ բան իւր գործ է .

զարով զանցեալ՝ ոք, յանցանէ,
 զեղջ յափրութէ՝ փոյթ հասանէ :
 'ի հարսանիս՝ երթն արժանէ,
 միայն զգոյշ՝ 'ի զեղծմանէ .

զոր գեղեցիկ՝ ուսուցանէ,
 փրկիչն եկեալ՝ երբ զայն օրհնէ :
 Գինւոյն անգամ՝ թէ նուազէ,
 սատար սիրով՝ մատուցանէ .

Իսկ թէ 'ի ջրոյն՝ էր զայն առնէ,
 Իմա՛, գինւոյն՝ լաւըն այն է :

Արդարութիւն :

Արդարեւ այն՝ այր արդար է,
 որ 'ի կոչուենա՝ զինքն յարդարէ .
 տեսի ոչ, զոք՝ 'ի մարդկանէ,
 որ յուժաւ, 'ի կեր՝ ոչ զանցանէ :

Արդ տուր կանոն՝ զոր արժանն է,
 նախ աւագացս՝ դու զայնմանէ .
 ապա թէ ոչ՝ այր չքաւոր,
 թող լայեւէ՝ զոր գտանէ :

Յօ՛ւե՛ի :

Նախ բուռն հարկց՝ զյետին բանէ,
 որ զօրութի՛ք՝ առաջինն է .

կանոնն ձեզ տաց՝ այսօր յանձնէ,
 եկայք կերայք՝ յիմ սեղանէ :

Իսկ որ բանի՛ւ՝ 'ի կանոնէ՝
 բարեխառնիս՝ առածն այն է .

Կեր առ 'ի կեալ, արբ զովանալ,
 մի կեար յուտել, գինին չայրէ :

Մուռնդ մարմնոյ՝ պէտք 'ի հարկէ,
 այլ ըզնաա՛ս՝ ո՛ր հարկ առնէ .

ո՛չ յաւելորդ՝ 'ի կերակրոց ,
 և յըմպելեաց՝ ախտ շատ յառնէ :
 Ուր բանաւոր՝ յայս սխալէ ,
 նա անբանից՝ հաւասարէ .
 որոց և՛ գոչ՝ և՛ կեալ՝ այն է ,
 զոր ուտիցէն , և ըմպիցէ :
 Իսկ բանեղէն՝ մարդոյս ճանճ է ,
 և հաց բանին՝ որ անմահ է .
 զի ո՛չ հացի՛ն՝ միայն կեցցէ ,
 այլև բանի՛ն՝ առ 'ի իննէ :
 Առ այս եղաւ 'ի սկզբանէ
 պատուէր պահոց . պահք իսկ բանն է ,
 յոր յանցուցեալ՝ 'ի բանսարկունէ ,
 'ի բարեխառն՝ ելաք վայրէ :

Պանայնասէր պճնօղ :

* Եւ զի՛նչ մասս՝ 'ի հանդերձէ ,
 որ գեղեցիկ՝ զիս զարդարէ .
 քանզի լսեմ՝ զբարեխառնէ ,
 Թէ՛ և առ այս՝ նա բան խառնէ :

Յ՛ւլէի :

Եւ կարի քաջ՝ այն ինձ անկ է ,
 յետ այն ելից մեր 'ի գրախտէ .
 ո՛չ մաշկեղէն՝ հանդերձ շատ է ,
 քեզ , զոր և հօր՝ քու՛մ ինք պատէ :
 Դարձեալ ինձ անկ՝ միշտ այն բանն է ,
 որ և ըզբնացս՝ մարդոյն յայտնէ .
 Թէ ո՛չ գիտես , զի գրեալ է ,
 հանդերձք , ընթացք՝ պատմեն զառնէ :
 Հանդերձ զքե՛ւ՝ անկ , որ ծածկէ ,
 և 'ի ցրտոյ անգամ՝ պահէ .

Իսկ

Իսկ զի՛նչ զարդք էն՝ էթէ մայցէ
 մարմին քո մերկ , կամ զոփայցէ :
 Ոչ ապաքէն՝ զքեզ յայտ առնէ ,
 սին պճ՛նասէր , որ զօշոտէ •
 որ տգիտաց՝ գուցէ ազդէ ,
 այլ իմաստնոց՝ յաչքս ծանօր է :
 Եւ որ ծանր՝ ծախըս առնէ
 քան զիւր ըզկար՝ առ մարդկանէ ,
 ոչ աւազաց՝ նախատ դնէ ,
 աղքատ հպարտ , անպէտ զանձնէ :

Ազնուական բարեկեցիկ :

Բարի է բանդ , որ միտ դնէ ,
 բայց աղաչեմ , բարեխառնէ •
 արդ միանձանց՝ և հրամայէ ,
 ըզձև գծուծ՝ հանել յանձնէ :
 Սուս է զգեստ՝ որ ՚ի ստուէ ,
 և խիստ ցփսի՝ խորդ ՚ի մազէ •
 սքեմ խոշոր՝ խրտուցանէ ,
 հին գրգռեակ՝ զիմ սիրտ խառնէ :
 Թո՛ղ զի ուտեստ՝ այնպէս խեղճ է ,
 չասեմ տաղտուկ , որ ինձ խիղճ է •
 ոմանց բակլայ , Թան յոսպանէ ,
 փուտ սլաքսիմատ , հաց յանուճանէ •
 Այլոց անժուր՝ ապուռ մի է ,
 և այլ կցորդ , Թէ գտանէ •
 գինի և ոչ իսկ՝ մտանէ ,
 ընդ խուղ անձուկ և ՚ի դրանէ :
 Չի՛նչ ասացից՝ զմենաստանէ ,
 որ զամ՝ քաջ դարմանէ •

Թէ զգեստու, Թէ կերակրոյ,
լաւ են սպաս՝ ՚ի սկզբանէ:

Մինչ զի ցորչափ՝ ինձ յաջողէ,
յայսպիսի վանս՝ այցել կամ է.
ուր ՚ի մեծէ, և ՚ի փոքունէ,
չատ մեծարիմ, օր շէն պահէ:

Յփեմ:

Ո՞վ մտացի, ո՞ւր ուսեալ է,
քո՛ լը հաճոյս գատել զայլմէ.

նոր հեղիաս՝ գիտես, ո՞վ է,
ըստեազգեաց՝ յանապատէ.

Ճգնող գովեալ՝ առ ՚ի օնէ,
նման նմին՝ չիք մարգարէ.

այլ ինքն օր՝ մեզ նմանէ,
զգեստ, ուսեսս՝ ոչինչ խարէ:

Ապա ուրեմն՝ ՚ի մեր կամս է,
բուռն հարկանել՝ զկամաւորէ.

խոնարհուԹի՛ ձև տո՛ւեալ է,
ու՛մ զայն տանել կարող եցէ:

Այլ մեր բանն է՝ զճանապարհէ
հասարակաց՝ որ դիւրինն է.

մի խոտորի՛ր՝ գէթ յայսմանէ,
լի՛ր բարեխառն, որ հրամանն է:

Զգաստ:

Յանկամ լսել՝ ըզժուժկալէ,
մարմնոյ մարտին՝ ի՞նչ ժուժկալէ.

զոյճախոհին՝ կատարմանէ,
զոր փորձուԹի՛ իւր պասկէ:

Յո՛ւնէի :

Զայդ խնդրեալի՛ր այր դու յայլմէ ,
 յետ ծնընդեան ան 'ի կուսէ •
 զոր իմ յակոր հայր դուշակէ ,
 ծագել երբեմն 'ի յուդայէ :
 Եւ ես ասեմ ը մարգարէ ,
 եկ հայրց յայնժամ հարց զայդմանէ •
 զի եգիպտոս յայնժամ փայլէ ,
 կուսակրօնիւք առ 'ի շնորհէ :

Օրինակ • Գ :

Պայեսիս :

Ի այր և եղբայր՝ իմ դու աւագ ,
 եղև ըստ բան՝ քո բաւանդակ •
 զի պահեցի՛ զայս մի եօթնեակ ,
 չոր աղուհաց՝ քան քառասնեակ :
 Այլ տակաւին՝ կայ հակառակ
 հոգւոյս՝ մարմինս այս ստամբակ •
 զի՛նչ արարից՝ այլ դժնդակ ,
 ասա՛ ո՛վ հայր՝ ինձ համարձակ :

Պի՛նն :

Եւ պահեցե՛ր՝ խորհուրդ յստակ ,
 եթէ թողեր՝ անասնձ քուռակ •
 և աղօթից՝ կա՛ս հպատակ ,
 որ չլինիս՝ դիւայ ծանակ :
 Զի՛նչ շահ պահել՝ ամբար առնագ ,
 հոգւով անհոգ և խստամբակ •

Երթ խորտակեալ զկամօքդ միակ ,
որ խորտակի՛ գիւնի բանակ :

Պայէսիոս զաննն :

Արդար ասաց , իմ է վրիպակ ,
'ի միտս , 'ի կամս՝ իմ բովանդակ •
զի գրուէք մտացս՝ զգայարանք ,
են անպարիտա՛ անցանդ՝ անփակ :
Եւ չար կամացս՝ թուի ներհակ ,
զոր ինչ առնեն՝ վեց իմ եղբարք •
մինչև խեռալ՝ ինձ դժկամակ ,
ընդ գուղնաքեայ ինչ ճախողակ :

Ազնուհաննն :

Ո՛ւր պիմենի՛ հօր է սենեակ ,
որ թարգմանի՛ հովիւ գիտակ :

Պայէսիոս :

Տեսեր փապար՝ մօտ վիմաճակ ,
անդ դադարէ՛ նա՛ միայնակ :

Ազնուհաննն :

* Ողջոյն ընդ քեզ՝ աբբայ , մենակ ,
գոր էս պիմեն՝ հայր հասարակ :

Պիճնն :

Ողջամբ եկիր , ո՛վ էս որդեակ ,
պիմեն չէ՛ հայր , ջուրի զաւակ •
Թէ սք ըզվարս՝ ճնանէաք ,
անշուշտ և հօր՝ նմանէաք :

Ազնուհաննն :

Թէ գուք այսպէս՝ խօսիք , սք հարք ,
մեք զի՛նչ գոգցուք՝ աշխարհավարք •
արդ էս եկի՛ այր ոք անարդ ,
լսել 'ի քէն՝ բան մեճահարկ :

Ը

Բան

Քանզի խորհուրդք՝ մտացս յուզակ ,
 'ի հին յածեալ՝ սք օրինակ ,
 յովսէփ ասեմ՝ ողջախոհակ ,
 նա զիս յլեաց՝ աստ յաղբերակ :
 Պիճն :

Զեգիպտոսի՝ զայն արեգակ
 թողեալ՝ խնդրես նոր մոլորակ .
 և մեր թէպէտ՝ աստ շրջանակ ,
 այլ առ նովաւ՝ աներևակ :
 Բայց արդ՝ ասա՛ , դու ինձ որդեակ ,
 ազանս իցես , թէ կապ պսակ .
 զի լս անձնիւր՝ անձին վիճակ ,
 խրատ և դեղ՝ կայ առանձնակ :
 Ազնուհանն :

Ես շուարեալ՝ յուզի արձակ ,
 ցարդ ալէկոծ՝ կամ յերկծովակ .
 պէսպէս ծփիմ՝ հողմով նաւակ ,
 դու իմ լէր ինձ ուղղեակ :

Պիճն :

Ո՛րդեակ , տիօք՝ շես ինչ դու խակ ,
 այլ կասարեալ՝ 'ի չափ հասակ .
 և ոչ մտօք՝ ես անտեղեակ ,
 թէ 'ի քո կամս՝ է այդ՝ միակ :
 Ա՛ռ և 'ի գրոց՝ քեզ օրինակ .
 կայ և 'ի լթոյ՝ տեսոյ , ցուցակ .
 ապա անձամբ՝ անձին կամակ ,
 զարժանն ընտրեալ՝ քեզն վիճակ :
 Մի՛ յայլոյ բանս՝ կապիր որդեակ ,
 գուցէ լինի՛ ելք դժկամակ .

որպէս փորձի՛ւնք, տեսաք, լուսաք,
դժգոհութի՛ն շատ, դժնդակ:

Ձե խրատատուն՝ եղև ծանակ,
և խրատաւուն՝ բուն նշաւակ,
ուստի յորդեն՝ զուր թշնամանք,
և անիրաւ՝ չար բամբասանք:

Ազնուականն:

Ո՛չ հայր, չատեմ, կապել զարձակ •
և ո՛չ խրատ՝ տալ բացարձակ •
այլ զայն ժտեմ, ուսո՛ միակ,
որ այն իցէ՛ բարեվիճակ:

Պիճն:

Ո՛չ ես, պօղոս՝ փող երկնառաք,
ո՛չ նա, այլ՝ Թ՛ր, խօսի յստակ •
լուծ յսի՛ է անուշակ,
այլ ո՛չ որոց՝ են անձառակ:
Լուծ Ծի՛ է դառնորակ,
այլ հեշտ թո՛ւնի՛ առ ախորժակ •
որ կարողն է՝ տանել, տարցի •
մեք՝ ի Թ՛նէ՛ այսպէս ուսաք:

Ազնուականն:

Գիտեա՛, չէ կեանք՝ Ծի կեանք,
տառապագին՝ միշտ տո՛ւնայտանք •
ո՛չ սլակասին՝ պէսպէս փորձանք,
ասէ երէցն՝ անդ՝ ի սասակ:

Միայն կան անդ՝ և այլ սփոփանք,
յորոց զուրկ են՝ ձերային կեանք •
արդ հարցանեմ, ո՛յր իցեն ջանք
արդիւնաշատ, և անվտանդ:

ՊԷՏԷՆ :

Ուր են փորձանք, անդ և վտանգ,
զի փորձանօք՝ լինի վատ անկ՝

արդ՝ քո բանիւն, այժմ տեսաք,

Թէ է Ծ՝ փորձանուտ ցանգ :

Արդիւնք լինին՝ ուր աշխատանք,
բայց ի՞նչ՝ հաճոյականք՝

արդ դու սաս, ուր գտանին

գիւրաւ այս ջանք՝ արդիւնականք :

Աւանդականն :

Թէ և խորին, այլ յայտնի բանք՝

ուստի շուճան՝ տարակուսանք՝

յայտնի լինին՝ և հետեւանք՝

Թէ ընտրելի ինձ ձեր այդ կեանք՝

ՊԷՏԷՆ :

Մի անխորհուրդ՝ լիցին ընտրանք,
վճիռք վաղվաղ՝ են անպիտանք՝

էկ, ուր եկըն՝ բանիցըս կարգ,

բուր և զվեր՝ հարկ, և ըզյարգ :

Աստ փորձանաց՝ փոխին անուճանք,

ուր փորձու թիք՝ են զանազանք՝

Թէ յուլացար, ահա վտանգ,

Թէ տքնեցար, ահա փրկանք :

Եւ յ՛Տի՛ գոգ, նոյն են բանք,

այլ ճիմանան՝ զայն՝ զբաղանք,

էն որ թեթեւ՝ գրին՝ յանցանք,

չատ են ծանուկք՝ լեռնանմանք :

Իսկ մենացեալ՝ անձին իւր կեանք

է պատերազմ, ոչ զառանցանք՝

հանդիսացեալք՝ ը մահ, ը կեանք,
 ցայդ և ցերեկ՝ աստ զօրականք:
 Եւ զի այսգոյն՝ են աշխատանք,
 վարձք ը նմին՝ են անսպասանք:
 նախանձ յանձին՝ կալ, ոչ մախանք,
 ուր կուսակրօնք՝ են վեհ իշխանք:
 Չեն շատ նոցին՝ ապաշխարանք,
 աս հանդերձեալ՝ փառաց վարձանք:
 շատ է նոցին՝ անանց պարծանք,
 զի են ՚ի վեր՝ վերօթեանք:

Ազնուհանն:

Իրաւացի են գովասանք,
 զոր աստ, և անդ՝ ունին կուսանք:
 մարմնով յերկրի՝ են սք հրեշտակք,
 հոգևով յերկինս՝ վերնաքաղաք:
 Այլ փարձու թէց՝ կալ հակառակ,
 ակար մարմին՝ խիթայ միակ:
 արդ աղաչեմ, ոչ ամաչեմ,
 ուսո՛ աս այս՝ ինձ կարգ և հնարք:

Պիճն:

Լուր, ոչ լինիս՝ ժուժկալ այլազգ,
 թէ ոչ անձ՝ տայ, են առածք:
 ծանիր, յուժմէ՞ է շնորհ ազգ ազգ,
 որով պճնին զգաստից դասք:
 Պահեա՛ զգանձ՝ զգոյշ, անպարծ,
 զի մի ոք գող՝ հասցէ յանկարծ:
 դիր պահապան՝ ամուր քո դրաց,
 դիւրաշքիկ՝ զգայու թէց:
 Այլ առաւել՝ կրկին աչաց,
 և կրկնափեղկ՝ շարժուն շրթանց:

Խոնարհութի, և լռութի,
 զոյդ աղօթից՝ և արտասուճաց :
 Մեռելութի մարմնոյ մեղաց,
 մնալ ոչ թարց՝ աշխատանաց •
 պահք առ նմին՝ հարկեոր սանձ,
 որ շանաստէ՝ տանել բեռանց :
 Խորհուրդ բանալ՝ հոգեոր հարց •
 յայտնէ զգիւնն՝ զանտես հնարս •
 հնազանդութի՝ անկեղծ և սարղ •
 հանէ ՚ի դաս՝ մարտիրոսաց :

Ազնուահանն :

Հայր, հաւատա՛, ինք առաքեաց
 զիս յուրս քո՝ առնուլ ըզդաս •
 արդ ՚ի համար՝ աշակերտաց
 քոց՝ համարեա՛ զիս զանարժանս :

Պիճն :

Աջ օրհնելոյն՝ ըզքեզ օրհնեաց,
 և օրհնեսցէ՛ զօրհանապազ •
 սիրով զքեզ՝ ես ընկալայց,
 այլ դու փորձեա՛ զխորհուրդ քո լայս :
 Եթէ կամիս՝ չունել սակաս,
 երթ վաճառեա՛ նախ զստացունձ •
 Եկ զկնի՛ ՚ի սկիտոյ վանս,
 մուծից ըզքեզ՝ ՚ի վարժարանս :
 ✠ Զի այս դասք են՝ առաքինեաց,
 լս համարոյ՝ քառից ծղկնեաց •
 նախկին դպրոց՝ է համբաղաց,
 և յ՛Յի՛ ընտիր դպրաց :
 Արթին յուսուճն՝ սնակիտաց,
 անբա՛ ՚ի սաղմոս՝ ցաւետարանս •

որ է լրումն՝ սք օրինաց ,
 պահպանութիւն՝ պատուհրանաց :
 Երբորդ է դաս՝ քերականաց ,
 դեռ յՏի՛ կարգացողաց •
 ոյք են հմուտք՝ հոգևորաց ,
 ՚ի մէջ անգէտ՝ պարզամտաց :
 Կան և նմանք՝ ճարտասանաց ,
 քո պէս յուզակք՝ բանից բարեաց •
 մինչև առած՝ յանկի ոմանց ,
 կայ յՏի՛ , չեք յանապատս :
 Երբորդ դաս մեծ՝ վանականաց ,
 խմատասէր՝ առաքինեաց •
 ոյք են ներկուռ՝ և գիտութեց ,
 այս հոգևոր՝ ճանապարհաց :
 Կեանքս վարեն՝ հասարակաց ,
 մեղրավատակ պարք սք մեղուճաց •
 և առ օգուտ՝ մերձաւորաց ,
 լոյս Տի՛ են միշտ վառած :
 Չորբորդ իման ըզվերին դաս ,
 ոյք ՚ի լերինա՛ են մեռակեաց •
 թծաբանք՝ խորհրդազգած ,
 թծուտոյցք՝ միտք խորիմաց :
 Տես , յակոբեան՝ սանդուղք են այս •
 վերտանելի՛ ընդ աշտիճանս :
 Տէր հաստատիչ՝ առաքինեաց ,
 հաստատ պահեան՝ զմո՛ւ դաս :



Մ Ի Ա Բ Ա Ն Ո Ի Թ Ի Ի Ն

Գործոց ընդ Բանին :

Օայս վայր են բանք մեր զբանից ,
և զգործոց ըստ պատշաճից .

Ժամ է ասել և ասկաւուք
զերկուցն թ նոյն հետս ընթացից :

Ձի են ոմանք յառաքինիս՝
յաչըս անձանց , ճոխք թ բանից .

քարոզք հանգոյն բեմասացից ,
և խբատատուք միշտ աշխարհիս .

Այլ վերջացեալք 'ի հանդիսից
գործոց բարեաց՝ անձամբ յանձինս .

բժիշկք այլոց՝ բուժիչք յախտից ,
ինքեանք հիւանդք և ախտալից :

Են և յուրք , դու մի լիցիս ,
որ դեգերին 'ի սուտ կարծիս .

որպէս այն թէ հանգոյն խօսից ,
գործովք իցեն և բարեւից .

Ձլեզուս իւրեանց՝ գործի բանից ,
ձեռս առդնեն՝ ժիր գործեւիս .

ուր նշաւակ են բուրբից ,
արք անպիտանք թ գործոյից :

Այլք խոստաբանք՝ փոյթ սիրալից ,
խօսիւք կարծեն ընուլ զպարտիս .

'ի փորձ գործոյն՝ եթէ նայիս ,
են միշտ անգործ , մի խաբեացիս :

Այլ չարագոյն այն է լը իս ,
 նոյնպէս լինել յաճայինս •
 Միշտ խոստանամք՝ օնն ըզբարիս ,
 պտղաբերեմք միշտ զանբարիս :
 Տկարութք թէ անկանիս ,
 ներող է օր , ուր փոյթ ունիս •
 Բայց չարութի խաբեբայից՝
 յայտ է , գրի յաննեբելիս :
 ✱ Բարէ ուրբան է գովելի ,
 այր գործունեայ՝ զոյգ ընդ բանի •
 Եթէ մարդկան հաճոյ լինի ,
 քանի՞ կարծես՝ իւրում հաստչի :
 Թագաւորաց կալ առաջի ,
 արժան՝ այր շոյտ և զգոյշ՝ ասի •
 Թագաւորին թագաւորաց ,
 ոչ վայելուչ է աւելի :
 Հանպա լիցնէք լը արժանի ,
 ծառայք վեհին երկնաւորի •
 Ժիր գործօնեայ յամենայնի՝
 լը աննարկել իւր հրամանի :
 Չեռք լը ոտից՝ տե՛ս ՚ի մարմնի ,
 զոյգ են՝ լինել աջող գործի •
 որսլէս և աչք՝ լը լսելի ,
 կրկին տունն՝ մեղ պիտանի :
 Սոյնօրինակ գործ լը բանի՝
 է պահելի միշտ զուգակի •
 Ե երկոցունց ուղիղ լինի
 ընթացք , յորժամ բարւոք քննի :
 Միտք դատաւոր՝ միշտ ընտրելի ,
 արթուն , ուղիղ , լը կանոնի •

Կամք գործադիր՝ զոր է բարի,
 Կարողութիւնք իւր լի կարի:
Առ կշռութի գործոյ լի բանի,
 զայս առ կանոն, կասկեալ յուշի.
 Բան միշտ սակաւ, գործ շատ լիցի.
 արդիւնք յալթող՝ քան զոր կարծի.
Խորհուրդ երկար՝ ի խորս սրտի,
 'ի ժամ գործոյ՝ փոյթ անդ պիտի.
 Կայ և խորհուրդ հարցանելի,
 իւր և որոց, քաջ կշռելի:
Թէ միշտ գործես՝ դու լի մտի,
 ստեպ զըջաս, դարձ ոչ լինի.
 ուր խորհրդով՝ ինչ վճարի,
 ստրջանալ՝ հազիւ լինի:
 ✠ **Զարմանք մի մեծ աստ զիս ունին,**
 զի մարդ մարդոյ ոչ հաւանին.
 ուր հակառակ փորձն է սորին,
 զի շատ լաւ է բան ընկերին:
Ոչ ապաքէն ամենեքին,
 փորձեմք յանձինս ըզհաւաստին.
Խորհուրդ, խրատ տամք՝ ի բարին,
 այլոց՝ քան թէ մերում անձին:
Ուր տեսանեմք զոք ցաւապին,
 կի՞ Վարանեալ՝ ի խորհրդին.
 քանիւք բարեօք խորհուրդ նմին,
 տամք լի ոճոյ սողոմոնին:
Արիանամք յայլոյ վշտին,
 վահագնաբար սիրտ տամք նմին.
 և իսկապէս լի մեծ մասին,
 արժանաւոր քանք մեր թուին:
I 5
Սա

Մակայն եթէ անձամբ անձինն ,
 յայն կիրս անկցուք մեք վշտագինն ,
 անդ բթանամբ մտօք բնաւինն ,
 և ոչ գիտեմք սիրտ տալ անձինն :
Արդ 'ի միտ առ աստի զյայտնին ,
 թէ բաւական չէ ոք ինքնին •
 և զի պէտք են շտեղ բանին ,
 զոր այլք ազդեն մեզ թ տեղին :
Եւ այս պատճառք հերիք լինին
 որսալ զմիտս վերժանողին •
 այլ կամք անձինն անձնիշխանին
 գիտեն ընտրել զհաճելին :
Տացէ ԹԾ՝ կամաց քոյին՝
 բերիլ միայն յիւր խնդրելին •
 յորում է զարդ բանականին ,
 երթալ զհետ իւր վախճանին :
Այս է վախճան և քերթողին ,
 և սոյն խնդիր աղերսաւին •
 նոյն և բանի գործնականին ,
 զոյգ թ գործոյ բանականին :

Վերջաբանութի Գերեւորի :

✱ Ո՛վ բանասէր՝ գործասէր գու ,
 ընկալ զընծայս՝ գրոյս խրատու •
 ուր բան թ գործ՝ հիւստնամ զարդու ,
 են և առնեն՝ քերթունամ ազգու :
 Ես անկեցի , ուղղեալ գու ,
 աճեցուցէ անկողն իմ , քոյ •
 ծաղկիլ բանիւ ըստ գարնայնոյ ,
 գործով աշտուղ տալ աշնայնոյ :

Ապա

Ապա թէ ոչ օր և ժամ գոյ ,
 զի այց առնէ՝ մեզ մեր այգւոյ .
 և ընդ բանի և ի գործոյ՝
 հատուցանէ՝ միոյ միոյ :

Ո՛չ ճառեցի քեզ զհաւատոյ ,
 և զյուսոյ և զսիրոյ .

որոց այլ ճառ ուրոյն պիտոյ ,
 թէև պատրաստ արդէն ելոյ :

Այլ յայտնեցի և ի չափու ,
 և զսոցին պէտքս արգոյ .

յընթացս բանին՝ յընթացս գործոյ ,
 յորդորական ի նոյն հետոյ :

Արդ՝ ՚ի վախճան մերոյ ուղւոյ ,
 հանգիստ առեալ՝ ի խոնջեւոյ ,

հունագս յօդեմ քեզ և երգոյ ,
 վերասլանալ ուժով ոգւոյ :





ՅԱՒԵԼՈՒԱԾ ԵՐԳՈՎ:

Ա. Երգ 'ի վերայ անոյն կենցաղոյս, Գրեալ
'ի ճակորդութեւն. յամի 1802. ռմ'ճա:

('ի ձայն, Վերաւորեցայ մեղօք:)

Քառասնամեայ արդ տիօք՝
 վեցամսեայ փորձի,
 անձն իմ անփորձանաւոր՝
 յալէճուփ ծովի .
 յօրինակ այս կենցաղոյս՝
 անդադարելի .
 ազատեա՛ն զիս տէր իմ տէր,
 մի առնիր հեռի .
 ազատեա՛ն զիս տիրուհի,
 յալեաց աշխարհի :
 Ծով ինձ ըսպիտակ եղև՝
 'ի տեղի կարմրի .
 յանաստ անկոհ յաճեալ՝
 կասուտակ դաշտի .
 որ էր հին՝ նորօրինակ
 միշտ անկ Տի . ազատեա՛ն ևն :
 Հնչէր յունկն իմ հին քարոզ՝
 գրոց հայրենի ,
 Ծովասարաս միշտ գիտել՝
 ըզվիճակ երկրի .

այլ փորձ անձնական ծանոյց՝
 զիմաստ կենդանի • ազատեալ ևն :
Տեսի 'ի ծովու ընթացս՝
 կերպարան ոչ մի •
 այլ՝ ժամ՝ի ժամէ փոխեալ՝
 գոյն ազգի ազգի •
 տես դու ինձ զաշխարհս ամէն՝
 յար այլայլելի • ազատեալ ևն :
Անունամբ և արդեամբք՝ է ծով
 դառն ջուրց ժողով •
 և աշխարհ աշխարելի՝
 ծով յոքնավրդով •
 երկոցունց գուհասարակ՝
 անցաւոր փութով • ազատեալ ևն :
Ո՛վ զիարդ պատահ 'ի ճահ՝
 ներքող մեծագով,
 պանծալ յընթացս խոյանաց՝
 անհետ թռչելով •
 ուր դանդաղութի ծովուցս՝
 բերէ մեծ դարով • ազատեալ ևն :
Յամել նաւու 'ի բացի՝
 անդ փասս յուղով •
 ալէկոծ մշտատատան՝
 ճախողակ հողմով •
 նոյն 'ի ծանր հոգս աշխարհի՝
 հոգւով ծփելով • ազատեալ ևն :
Յամել նաւու 'ի խարխիս՝
 ոչ ընդհատ գուղով •
 զոյգ ընդ այլ տատամսութեց՝
 կրել յետին սով •

նոյն որ կապի ընդ երկրի՝
 յապի սովեչով • ազատեա՛ւ ևն •
 Ո՛ր թողից զչար արկածս՝
 յետին վտանգի ,
 նաւակո՛ծ՝ նաւաբեկեալ՝
 քաղիմամբ ըզքարի •
 տեսանես և զգիւրս յերկրի՝
 խորտակեալ յողի • ազատեա՛ւ ևն •
 Թէ հին է նաւդ՝ ահա ահ ,
 թէ արդ քայքայի •
 Տերու՛թի քաջ նշանակ՝
 որու՛մ միտս ունի •
 Իսկ մանկու՛թի՝ մակոյկ ,
 որ գիւրաւ շրջի • ազատեա՛ւ ևն •
 Թէ ծանրեալ բեռամբք , վտանգ
 ընկղման՝ յայտնի •
 մեղօք ծանրաբեռն անձին՝
 օրինակ լինի •
 քայց ճառաքինւոյն կայ ահ ,
 զի մի սայլթաքի • ազատեա՛ւ ևն •
 Թէ ՚ի խորս միսիս ծովու ,
 երկիւղ մրրկի •
 մի խաղար և գու յանդուռնդս՝
 հողոց աչխարհի •
 և յանապատի երկի՛ր՝
 նասիլ ՚ի վիմի • ազատեա՛ւ ևն •
 Յաջողու՛թի , հողմավար՝
 փառաց օրինակ •
 յեղակարծ ձախողու՛թի՝
 հողմոց նմանակ •

բաղմագանձ նաւ մեծութեց՝

ցնդեալ 'ի յատակ • աղատեալ ևն :

Առագասա լիապատար՝

պատառի համակ •

փքոցուռոյց, որ տնքայր՝

դտանի ծանակ •

հեղիկ ընթանալեաց նաւ՝

անքոյթ աջողակ • աղատեալ ևն :

Մի պարծիր, յառաջադէմ՝

յընթացս գիտութե •

յանկարծ յառնէ քեզ 'ի խորս՝

մռայլ մ' թուրեան •

ուր կարծէիր յառաջել՝

հեռք 'ի յետս դառնան, աղատեալ ևն :

Մի ցնծար ընդ միջօրեայ՝

լուսափայլ անոճան •

դայ գիշեր խաւարամած՝

վասհամբաւութե •

լուսին փոքր՝ մեծ միսիթար,

թէ ժուրեա լրման • աղատեալ ևն :

Կալ անշարժ ըզքս դիտակ՝

յասող բեռական •

Է մեզ, Է մութն՝ 'ի ցուցակ

առաջնորդական •

ասող ծովային՝ Մարիամ,

միակ օգնական • աղատեալ ևն :

Ղեկ հաւատոյ՝ քաջ ուղղիչ՝

ընդ ուղի արքունի •

խարխիս Յուսոյ՝ աղատիչ՝

'ի հանգիստ բարի •

Սէր 'ի վեր սըացուցի՞ք
 կէտ նապատակի • ազատեա՛ւ ԼՆ :
 Հեզութէ՛ն Հոգի՞դ բարի՛
 շնչեա՛ յիս քաղցրիկ •
 հանել 'ի հանգիստ հեզոց ,
 յո ցանկան մարդիկ •
 'ի հօր օթեան հանգչել՛
 յաւէթ երջանիկ • ազատեա՛ւ ԼՆ :
 Ո՛վ անասման ծով բարեաց՛
 Հայր ամենիշխան •
 հանձն զիս 'ի ծովէս չարեաց՛
 յար տանջողական •
 հանգո՛ 'ի նաւահանգիստ՛
 կենացդ անվախճան • ազատեա՛ւ ԼՆ :
 Սէր անուն Յս՛ իմ յոյս ,
 ղեկավար ճարտար •
 որ ընդ ծով աշխարհական՛
 անհետ ընթացար •
 անցո՛ զիս ընդ ծով կենացս՛
 անմեղ և արդար •
 ազատեա՛ զիս փր իմ փր ,
 մի առնիր հեռի •
 ազատեա՛ զիս տիրուհի՛
 յալեաց աշխարհի :

Բ. Երգ առ չք Աճաճիկն՝ սպորազրուել
նոյն նաւորդուել յերհաւելոյ :

('ի ձայն , Ընտրեալ 'ի մէջ հողեղենաց :)

(Գոստա՛ Վոյս՝ գշտոյ փառաց ,
սեբաստէ՛ Լոյս տիեզերաց •
մայր սեպհական՝ քոց որդեգրաց •
միայն յոյս մեր նբհի կոյս 'ի քեզ մնաց :
Ողորմ՝ ձայնիւ՛ գոչեմք այսօր ,
Մխիթարայ՝ մեծ արքայ հօր •
անմխիթարք՝ մեք աստանօր •
միայն յոյս մեր ևն :
Յեւեց մերոց 'ի վե՛նետկոյ ,
ցայս վայր նեղեմք 'ի հարաւոյ •
որ ուղղագիծ արգել ուղւոյ •
միայն յոյս մեր ևն :
Է՛ զի հաշեմք 'ի խարսխի ,
է՛ զի մաշեմք 'ի ծուփ ծովի •
համբերութե՛ համբար հաշի •
միայն յոյս մեր ևն :
Չորեքտասան խարխսխ արկաք ,
յերկուս տեղիս և 'ի տաննեակ •
զի յերկօսին կրկին մտաք •
միայն յոյս մեր ևն :
Եւանէաք ուրախութե՛ք ,
մտանէաք ո՛չ տխրութե՛ք •
զի մուտ մեր էր միշտ փախստեամբ •
միայն յոյս մեր ևն :
Բ.Է

Բիրան՝ բերանին թրեատու,
 շնչեաց յանկարծ հողմ ահարկու •
 վտանգ յետին՝ յայնմ պահու •
 միայն յոյս մեր ևն :

Անգորր անուն նաւահանգիստ,
 որ ետ երբեմն նոր վեհին նիստ •
 հաղիւ՛ց ցածոյց ըղհարաւ խիստ •
 միայն յոյս մեր ևն :

Երիցս օգնեաց՝ ծովեղերեաց,
 շէն և անշէն, գիրք առ յապաց •
 կրկին՝ անշուք ծոց մանառլեաց •
 միայն յոյս մեր ևն :

Եւք մեր անտի փու թով նախագոյն՝
 նատոյց զնաւն՝ ի ծագ ծոցոյն •
 խակ մուտն անդրէն՝ գուշակ սովոյն •
 միայն յոյս մեր ևն :

Յայտնի հրաշիւք զերծաք զկնի
 ՚ի բուռն հողմոյ՝ ՚ի թռէ բոցցի,
 ի ներքսագոյն գող քառալոնի •
 միայն յոյս մեր ևն :

Յայնժամ համբաւ չար հասանէր,
 բեկման երկուց նաւաց յեղեր •
 ուր և գտան գէշ և խեղեր •
 միայն յոյս մեր ևն :

Յետագարձեալ անտի ՚ի վեր,
 հաղիւ՛ց զերծաք մեք անվեհեր •
 ՚ի լեզինա հիւրընկալ մեր •
 միայն յոյս մեր ևն :

Անգ կատարեալ զաւուրս ծննդեան,
 ուխտս ուխտեցաք յայցեւո՛ւն տան,
 Եբ

- Ի՞նչ տիրամօրդ պատկերին այն •
 միայն յոյս մեր ևն :
- Հասեալ յետոյ՝ ՚ի վարդարանն
 անուռն , որ մօտ է ՚ի ռակուղայն ,
 նորոգեցաք զուխտ առ Աբբայն •
 միայն յոյս մեր ևն :
- Քսանօրեայ ժուժեալ անդէն ,
 ք տարեգլուխս անցեալ արդէն •
 պակասեցաք և ՚ի հացէն •
 միայն յոյս մեր ևն :
- Իջեալ անտի ՚ի քուռսողա՝
 յուխտ ամբարձաք սք Անտոնայ ,
 հարիւրնոճեան լեառն մերձակայ •
 միայն յոյս մեր ևն :
- Յեւս ՚ի յուղի հարաւ ուժգին
 յետս ընկրկեր զընթացս նաւին •
 անդ հասանէք վտանգ վերջին •
 միայն յոյս մեր ևն :
- Աքանջելիք անժխտելի
 պահեալ զմեզ՝ մօտ առ վիժի ,
 ձգեաց զնաւն՝ յանկարծակի •
 միայն յոյս մեր ևն :
- Հարիւր և մի աւուրք անցին ,
 ապա հասաք զանթա կղզին •
 և անդ ելեալ՝ զերծաք ՚ի նմին ,
 շնորհիւ սք այ անբիծ կուսին՝
 զերծաք ՚ի նմին :
- Յամի փրկչին Թն յնի
 հազար ութհարիւրերորդի •

նաև երկու յայն աւելի .

Ճորհիւ սբյ անբիծ կուսի՝

զերծաք 'ի նմին :

✠ (Անտի ելաք յուղի չորիցս ,
գալ հարկեցաք այսրէն երիցս .
յուխտ պատկերի անդ հիմնադրիս ,
'ի տուն հայկեան բարեկամիս :

Քսանէրկու աւուրք չափին
ընթացք ծովու մեղ յետ նորին .
յիտրա , 'ի ծիա , խարիսխ կրկին ,
մինչ 'ի զմիւռնիս՝ հանդիստ սրտին :

Այլ յետ անդրէն անտուտ ելից՝
զեղան կրկին՝ վիշաք ծովուն յիս .
քսան և մի աւուրքք յալիս ,
վեց խարսխօք՝ յանդ ել ուղիս :

Եւ արդ՝ 'ի լրումն ամսոց վեցից ,
'ի ճնէժայ ցմեծ սյօլիս .
ժաման եղաք անյուսաալից ,
բարձր բաղկաւ տն ամենից :

Փառս տալով էին էից ,
ընդ տիրամօր կուսի կուսից .
հանդերձ սրբովք յաւիտենից ,
որք բարեխօս են 'ի կարիս :

Այս ամ անցք դժոճարին ,
դիւբին ցուցան յետագարձին .
յետ եօթնամեայ ժամանակին ,
յեւս 'ի սյօլսոյ՝ գալ յիս տեղին :

Ձի վեց ամսոց՝ որ նախ անցին ,
փոխան եղաւ ամբողջ տարին .

յեւրեց 'ի մուտս՝ ճանապարհին,
 ծով և ցամաք՝ երկարելին :
 Զոր չէ՛ ժամուս գրել գրչին,
 ոչ նո՛ւագել՝ և երգողին :
 զի այլ գործ է այն առանձին,
 արձանագիր յիւրուս կարգին :
Միայն դնեմ զանժխտելին
 նո՛ւագ ուխտի՝ սբօյ կուսին :
 նա կատարեաց զիմ՝ խնդրելին,
 ես նշանակ ցուցեց շնորհին :)

Գ. Երգ գոհուէ առ փրամայրն՝ գրեալ յեւ
 փարեհան ճոզորդուէ . յամի 1809 . 1810 .
 ումճը . ումճթ :

('ի ձայն՝ Երանուհի մարիամ :)

Մնեղամայր մարիամ, կոյս նծածին .
 բանին բարձող տիրամայր, տաճար
 երկնային .
 գեղեցկաչէն խորան լուսոյ,
 դու հարսնարան՝ անմահ փեսային :
Երկինք յերկրի յօրինեալ՝ պայծառ լու
 սածին .
 զարդարեալ զարմանալի՝ աթոռ ան
 բաւին .
 էին լուսոյ դու օթարան,
 ընտիր արև՝ արևելք կրկին :
Թագուհի մեր պանծալի, յոյս փոքու
 մեծին .

Ժողովուրդնոր սիրոնի՝ քե ցնծայ յողինս
 Իսկապէս մայր եկեղեցւոյ ,

լուսատու ջահ՝ մթազին սրտին :

Խնդիրք մեր քե ամենայն՝ յորդւոյդ կա-
 տարին .

Ծուփք խորհրդոց մեր համայն՝ իսկոյն
 խաղաղին .

կարիք հոգւոյ մեր և մարմնոց ,

հանապազ քե՝ մատակարարին :

Ձեռն ինձ ետուր յարածամ՝ մայր քո
 որդեգրին .

զուղեւոյս ք ծով յայս ամ, խառն ընդ
 ցամաքին .

Ճմարտապէս՝ ի քեղ պարծիմ ,

մայր նք աջով քով հասի ուխտին :

Յիս աիրուհի մեծ եղև՝ գուժ սիրոյ
 քոյին .

նորօրինակ այցելու՝ ի վիշտ վտանգին .

չուրջ փարեւով որպէս թեօք ,

ողջամք բերել յուխտ քո՝ յիմ տեղին :

Ձեր յոյս կենաց՝ ի նաւին՝ ծակեւոյ ինք-
 նին .

պանծալի կոյս դու հաներ ըզմեզ՝ ի
 կողին .

Ճերմ արտասուճօք զքէն գոհանամք ,

ուհացոյց մեր՝ ուղղիչ ի բարին :

Սիկիւեան պանդխտուժե՝ աւուրք յեր-
 կարին .

Վայ որոց յուսան ի մարդ , զի ոչինչ

օգտին .

տիրամօրդ մեզ պատկերն օգնեաց,
 բամբէլ յանկարծ՝ յայսկոյս 'ի գետինն :
 Տոյց սրտիս արդ ցնծուէ՝ երգեմ զուխ
 տելին .

Լիւսեալ զայբուքեն ողջոյն՝ 'ի պատիւ
 կուսին .

փառք փրկողին, և մօր փրկչին,
 քաղցր բանիւք յերկրի և յերկին :

Դ . Երբ սրբի կարօտեւոյ յերեւե յերեւես :

(անդադար նուճագելի յամ ժամանակի
 բազմայեղանակ :)

Իմ հայրենեաց՝ եմ ես կարօտ, յայս
 անցաւոր իջեան,
 նեղ է սրտիս՝ նախիջեման, ո՛րք ինձ վե
 ըին վերջաման .

ուր փառաց հօրն՝ է օթեման, ժառան
 գութի սեպհական,
 եթէ եղէց՝ ես հարազատ, որդի իմ հօր
 սիրական :

Արդ մի պարծիր՝ աշխարհ ունայն, լի
 նեւ սրտիս օթարան,
 զի անցաւոր՝ պանդխտութեանս, առ
 օրեայ ես անցարան .

գալով գայցէ՝ ո՛չ անագան, անանց կե
 նաց ճեմարան,
 ուր յաւիտեան՝ կայ և մնայ, ուրախու
 թի իմ միայն :

Տիրականին՝ եմ ես տենչող՝ տեսող լի-
 նել մեծութե՛ն,
 զի ուր տիրն է, անդ եղիցի՝ իւր բանա-
 կան պաշտօնեայն •
 Ըցցի անձն իմ՝ ունայնացեալ, ՚ի ծով
 անչափ անսահման,
 զի ոչ այլազգ՝ առնու յապուրդ՝ գոյնց
 սրտից մեր սահման :
 Յոյս մխիթար՝ անմահարար, ինձ ՚ի վե-
 ռուստ՝ հեղական •
 Իցէ՞ արդեօք՝ և խնդալի ընդ վերնա-
 դրոշմ այս անունն •
 արեամբ գառինն անարատի՝ գրեալ յերկ-
 նից դպրութեան,
 մատամբ հոգւոյն՝ անեղծական բան տօյ
 գործնական :
 Դու տիր ետուր՝ ինձ նունագել՝ զայս հա-
 մառօտ ազդարան,
 դու կատարեա՛, գլխաւորեա՛, զոր ազ-
 դեցեր՝ ՚ի ծառայն •
 ՚ի քեզ յուսամ, ՚ի քէն յուսամ, յամբօկ
 հանել՝ յանվախձան,
 զի և միակ՝ ոգւոյս բերման՝ դու մի մի-
 այն՝ ես վախձան :

Վ Ա Խ Ճ Ա Ն :